

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ

ԳԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

*ՄՔարգա և սիրելի Գագիկ Կարգոյաններ  
լախազա) և Կարգոյաններ  
հիմապ արեւելապարկ*

Բնագրի իրավունքով

*Գ/ՄԻ - 95/6*

*Կարգոյան Կարգոյան*

ԽԱՂԱՏՐՅԱՆ ՎԱՐԴԱՆ ԱՐՇԱՎԻՐԻ

ԱՍՏՐԱՄԱՆԻ ՀԱՅՎԱԿԱՆ ԳԱՂՈՒԹՅՈՒՆ  
/16-րդ դարի կեսից - 20-րդ դարի սկիզբը/

ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ՝ Հալ ժողովրդի պատմություն

Ս Ե Ղ Մ Ա Գ Ի Ր

Պատմական գիտությունների դոկտորի գիտական  
աստիճան հասցեւոր առնախոսութեան

Աշխատանքը կատարվել է ՀՀ ԳԱԱ Գատմության ինստիտուտի հայ գաղթավայրերի պատմության պրոբլեմային խմբում:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱԽՈՍՆԵՐ՝ ԲԱՐՈՒԿԱՐՅԱՆ Վ. Բ.  
 ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, պատմական  
 գիտությունների դոկտոր, պրոֆե-  
 սոր

ԴԻԼՈՑԱՆ Վ.Ա.  
 Գատմական գիտությունների դոկտոր,  
 պրոֆեսոր

ԹԱՎԱԲԱՆՅԱՆ Ն.Ա.  
 Գատմական գիտությունների դոկտոր,  
 պրոֆեսոր

ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱԶՄԱԿԵՆՊՈՒԹՅՈՒՆ՝ Երևանի պետական համալսարանի հայ ժողովրդի պատմության ամբիոն:

Գաշտպանությունը կայանալու է 1995 թ. 13 -ին, ժամը 13 -ին ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտին կից մասնագիտական խորհրդի նիստում:

Հասցեն՝ 375019, Երևան, Մարշալ Բաղրամյան պողոտա, 24<sup>Գ</sup>

Ատենախոսությունը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրը առաքված է 1995 թ. -----, -----, -ին

ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ  
ԳԻՏԱԿԱՆ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Թեմայի արդիականությունը: Հայկական համայնքները տարբեր կերպերով հայ ժողովրդի անբաժանելի մասն են և շուրջհատուկ տեղ են զբաղեցնում նրա պատմության մեջ: Դրանք շարունակ, հատկապես բուն Հայաստանում, պետական, հասարակական և մշակութային զարգացման անհրաժեշտ պայմանների բացակայության ժամանակաշրջաններում հայկական համայնքներում գոյություն են ունեցել ազգային կրթական, մշակութային օջախներ, երբեմն էլ՝ ինքնավարության մարմիններ, որոնք ունեցել են պետականության հատկանիշներ:

Վերջին տարիների իրադրությունների հետևանքով տեղի է ունեցել հայ բնակչության ազգային ինքնագիտակցության վերելք ինչպես Հայաստանում, այնպես էլ նրա սահմաններից դուրս:

Աղբյուրներում հայերի ցեղասպանության, Արցախում և Աբխազիայում լարված դրություն, Հայաստանում տնտեսական և սոցիալական ծանր վիճակի պատճառով ուժեղացել է հայերի գաղթը Անդրկովկասից, ավելացել է հայկական համայնքների քանակը, հայ բնակչության թվաքանակը՝ Բուխարեստանում և Նախկին ԽՍՀՄ մյուս հանրապետություններում: Դրա հետևանքով ամրապնդվել են համայնքների կապերը Հայաստանի հետ, ազգային կյանքը ակտիվացել է նոր բնակավայրերում, առաջացել է գաղթավայրերի պատմությունն ուսումնասիրելու պահանջ: Առանց հայ համայնքների առաջացման և զարգացման պատմությունն ուսումնասիրելու անհնարին է պատկերացնել հայ ժողովրդի պատմության լիարժեք ուսումնասիրությունը: Դրանով է պայմանավորված գաղթավայրերի պատմության համակողմանի հետազոտման անհրաժեշտությունը:

Նման կարևոր գաղութների թվին պատկանում է նաև Աստրախանի հայկական գաղթավայրը: Դա պայմանավորված է Աստրախանի աշխարհազբաղյան դիրքով, գաղթօջախի երկարատև գոյությամբ, ինքնավարման մարմինների զարգացման մակարդակով, քաղաքի և տարածքաշրջանի տնտեսական կյանքում ունեցած բացառիկ դերով, այն ավանդով, որը ներդրում էր գաղութը հայ ժողովրդի հասարակական ու մշակութային կյանքում:

Ուսումնասիրությունների նպատակները և խնդիրները: Սույն աշխատությունների նպատակն է ստեղծել ընդհանրացնող գիտական ուսումնասիրությունն Աստրախանի հայկական գաղութի բազմադարյան և բովանդակալից պատմության մասին:

Նպատակին հասնելու համար մենք անհրաժեշտ ենք համարել լուծել հետևյալ խնդիրները՝ արխիվային և գրական տվյալների օգնությամբ ուսումնասիրել Աստրախանում հայկական գաղթավայրի առաջացման պատմու-

թուևը, պարզաբանել նրա թվաքանակի և տնտեսական դերի աժի պատճառները, հայերի իրավական ինքնավար կարգավիճակի նվաճման փաստերն ու հանգամանքները, ցույց տալ հայ եկեղեցու դերը համայնքի կյանքում, հետազոտել Ասորխանում հայկական տպարանների, դպրոցների, թատերական խմբերի, քարեգործական, քաղաքական, հասարակական և ազգային ուրիշ կազմակերպությունների առաջացման ու զործունեության պատմությունը:

Ուսումնասիրության գիտական նորությունը: Չնայած դրան, որ վերջին տասնամյակներում լույս են տեսել մի շարք հետազոտություններ Ռուսաստանի հայ համայնքների պատմության վերաբերյալ /առը թվում մի քանի թեկնածուական ատենախոսություններ/, որտեղ քննարկվում են Ասորխանի հայ զաղութի պատմության, առանձին մասնակի հարցեր կամ շրջաններ, սակայն մեր աշխատությունը ամբողջական, ընդհանրացնող ուսումնասիրություն է Ասորխանի հայկական համայնքի չորս հարյուրամյա բովանդակալից պատմության մասին:

Հայ զաղութավայրի տիպը որոշելու և դրա պատմության պարբերացման համար մենք ցուցաբերել ենք տարբերակված մոտեցում՝ ,,զաղութ,, , , համայնք,, և ,,զաղութավայր,, հասկացությունների նկատմամբ: Համաձայն աղ մոտեցման՝ ,,զաղութավայրի,, /,,զաղթօջախի,, / տակ մենք հասկանում ենք ամենաընդհանուր հասկացության՝ զաղթականների բնակավայր: ,,Համայնք,, ենք կոչում այն զաղթավայրը, որն ունի եկեղեցի, ծուխ կամ ազգային դպրոց, թերթ, որևէ հասարակական կենտրոն և այլն: Ու վերջապես ,,զաղութում,, /ի տարբերություն համայնքի / ենթադրվում է ազգային ինքնավարության գոյություն: Ասորխանի հայ զաղթավայրը գոյություն է ունեցել դեռևս Ոսկե հորդայի ժամանակներից, իսկ ուսական Ասորխանի հիմնադրվելուց հետո, հետագա հարյուրամյակների ընթացքում, այդ զաղթավայրը տարբեր ժամանակաշրջաններում ունեցել է զաղութի՝ վերը թվարկած բոլոր հատկանիշները:

Այդ հիմունքով մենք հաստատել ենք Ասորխանի հայ զաղթավայրի՝ որպես դասական զաղութներից մեկի առաջացման, զարգացման և վերափոխումների բնորոշ փուլերը: Դրանք են՝ 1/ զաղութի գոյացման և զարգացման ժամանակաշրջանը /16-րդ դարի կեսից - 18-րդ դարի կեսը/, երբ տեղի է ունեցել հայ զաղթօջախի ձևավորումը, ասորխանահայերի տնտեսական զործունեության կազմակերպումը և ուսական կառավարության առաջին արտոնությունների ստացումը, 2/ զաղութի՝ որպես ինքնավար միավորի իրավա-վարչական մարմինների ձևակերպման և զործանման ժամանակաշրջանը /18-րդ դարի կեսից - 19-րդ դարի կեսը/, որը համընկնում է Ասորխանի հայերի առևտրաարդյունաբերական բազմակողմանի զործու-

նեություն և մշակութային-կրթական օջախների կազմակերպման ժամանակի հետ, 3/ հայ զաղութի արտոնյալ կարգավիճակի վերացման հաջորդ ժամանակաշրջանը /19-րդ դարի կեսից - 20-րդ դարի սկիզբը/, երբ հայերի տնտեսական զործունեությունը ծավալվում է Ռուսաստանում՝ կապիտալիստական հարաբերությունների զարգացման պայմաններում, և միաժամանակ նկատվում է Ասորխանի հայերի հասարակական ու մշակութային կյանքի վերելք: Այդ փուլերին համապատասխանում է և մեր ուսումնասիրության շրջանաբաժանումը:

Ասորխան զաղթավայրի ձևավորումը մեր կարծիքով առաջացել է ոչ թե ինչ որ միանգամայն կարգադրություն կամ հայերի զանգվածային վերաբնակեցմամբ /ինչպես դա եղել է շատ դեպքերում/, այլ հայ բնակչության աստիճանական ներթափանցման ու հաստատման հետևանքով:

Ուսումնասիրված է ինքնավարության մարմինների զործունեությունը: Հայերը մոտ հարյուր տարվա ընթացքում օգտվել են այդ համակարգից և այդ ժամանակաշրջանը նշանավորվել է հայերի՝ քաղաքային իշխանությունների և վաճառականության վերնախավի դեմ պայքարով՝ հանուն իրենց իրավունքների ու արտոնությունների: Այդ պայքարի ընթացքում տեղի են ունեցել հայերի իրավական կարգավիճակի զանազան փոփոխություններ, իսկ նրանց իրավա-վարչական մարմինը ենթարկվել է տարբեր ձևերի վերակազմությունների: Մենք որոշել և հետազոտել ենք այդ մարմնի զործունեության հիմնական փուլերը:

Արխիվային փաստաթղթերից հայտնաբերված և աղյուսակների վերածված բազմաթիվ թվական տվյալները ցույց են տալիս Ասորխանի հայ բնակչության կարևոր տեղը Ռուսաստանի արևելյան և ներքին առևտրի, ինչպես նաև մանածագործական արտադրության մեջ՝ մոտ 100-150 տարիների ընթացքում /17-րդ դարի 2-րդ կեսից մինչև 19-րդ դարի 1-ին կեսը/: Միաժամանակ հայերը ակտիվ կերպով մշակցում էին սոցիալ-տնտեսական առաջավոր հարաբերությունների զարգացմանը: Ասորխանի հայ համայնքը կարևոր դեր է կատարել համառուսաստանյան շուկայի ձևավորման, Ռուսաստանում վարկի համակարգի ընդլայնման, վարժու աշխատանքի կիրառման, ինչպես նաև այլ առաջընթացի տարածման գործում:

Ասորխանի հայերը նշանակալից ներդրում ունեն հայ ժողովրդի ազատագրական պայքարում: Նրանք մասնակցել են Ռուսաստանի կողմից կազմակերպված ռազմական և դիվանագիտական միջոցառումներին՝ աշխատելով դրանով աջակցել իրենց հայրենիքի ազատագրման գործին: Ասորխանի համայնքի հասարակական և ազգային կյանքում կարևոր է հայոց եկեղեցական թեմի դերը:

Արխիվային և գրական աղբյուրների վերլուծությունը ցույց է տալիս, որ Ասորխանի հայերը զգալի չափով կապված են եղել հայ մշակույթի

հետ: Աշխատութիւնը լուսաբանում է Ռուսաստանում հայկական առաջին աշխարհիկ ուսումնական հաստատութեան /Աղաբաբայան դպրոցի/ և գործող հայկական տարանների պատմութիւնը, որոշված է լուսա տեսած գրքերի, տարբերական հրատարակութիւնների, ինչպես նաև ազգային թատերական բեմադրութիւնների քանակը: Հետազոտութիւնների ընթացքում հայտնաբերվել և նկարագրվել են անցյալում անհայտ հրատարակութիւնները, պարզվել են Ասորիսանի հայերի հասարակական և մշակութային կյանքի շատ էջեր:

Ռուսումնասիրութեան արդյունքների գործնական նշանակութիւնը:  
 Ասորիսանի հայկական գաղթավայրի բազմադարյան պատմութեան ուսումնասիրութիւնը հայկական համայնքների լայն ուսումնասիրութեան բաղկացուցիչ մասն է, որը վերջին տարիների ընթացքում իրականանում է ՀՀ ԳԱԱ պատմութեան ինստիտուտի մասնագետների կողմից: Ասորիսանի նման կարևոր հայկական գաղթավայրի պատմութեան ծավալուն և բազմակողմանի ուսումնասիրութեան ավարտը այդ աշխատանքի անհրաժեշտ օղակներից է:

Հիմնադրու լծային, տիպաբանական և ուրիշ ընդհանրացնող այն հատկանիշները, որոնք մշակել ենք մեր ուսումնասիրութիւնների ընթացքում, կարող են կիրառվել նաև ուրիշ հայկական համայնքների պատմութեան ուսումնասիրման ժամանակ, և, մասնավորապես, արդեն օգտագործվել են մի շարք հրատարակված և հրատարակելու համար պատրաստ աշխատութիւններում:

Աշխատութեան նախապաշտպանութիւնը: Ասորիսանի հայկական գաղթավայրի պատմութեան ուսումնասիրութիւնը իրականացվում է մեր կողմից՝ ավելի քան 30 տարիների ընթացքում: Հիմնական փաստական նյութը և թեմային վերաբերող եզրակացութիւնները շարադրվել են շատ հրատարակութիւններում /մոտ 25 մամուլ ծավալով/, որոնց ցուցակը կցվում է ատենախոսութեանը և սեղմազրին: Աշխատութիւնը քննարկվել է ՀՀ ԳԱԱ պատմութեան ինստիտուտի Հայ գաղթավայրերի պատմութեան խմբի նիստում:

Ատենախոսութեան կառուցվածքը և ծավալը: Աշխատութիւնը բաղկացած է ներածականից և 4 բաժիններից /որոնք ընդգրկում են 11 գլուխ/, վերջաբանից, օգտագործված աղբյուրների և գրականութեան ցանկից, կրճատումների ցանկից: Աշխատութեան հիմնական տեսքը 408 էջ է:

ԱՇՈՍՏՈՒԹՅԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներածութեան մեջ տրվում են աշխատութեան ընդհանուր բնութագիրը և թեմային վերաբերող սկզբնաղբյուրների ու գրականութեան տեսութիւնները:

Թեմայի ժամանակագրական լայն ընդգրկումով և բարձրացված հարցերի մագնսութեամբ է բացատրվում սկզբնաղբյուրների և գրականութեան մեջ ցանկը: Օգտագործված աղբյուրների բարդ հատկութիւնն իր կնիքն է դրել նաև հայկական գաղթավայրերի երկակի նշանակութեանը՝ ինչպես հաժողովրդի պատմութեան, այնպես էլ համապատասխան երկրի կամ շրջանի /տվյալ դեպքում՝ Ռուսաստանի և Ասորիսանի տարածքաշրջանների/ համար: Մեզ հետաքրքրող հարցերի ուսումնասիրութեան նպատակով օգտվել ենք Յրևանի, Ասորիսանի, Մոսկվայի, Սանկտ-Պետերբուրգի, Կազանի արխիվաֆոնդերից:

Հայաստանի Կենտրոնական պետական պատմական արխիվում պահպանվում են Ասորիսանի հայերի ինքնավարութեան մարմինների, Ասորիսանի հայութեան և այլ գաղթավայրերի պատմութեանը վերաբերող ուրիշ ֆոնդեր: Ինչպես այդ ֆոնդերը, այնպես էլ Մ. Մաշտոցի անվան Հին ձեռագրերի գիտատեղիական ինստիտուտի /Մատենադարանի/ արխիվի կաթողիկոսի ֆոնդը պահպանվում են շատ նյութեր՝ Ասորիսանի հայ գաղութի սոցիալական դրութեան, հասարակական և մշակութային կյանքի վերաբերյալ:

Ասորիսանի մարզի պետական արխիվում մենք ուսումնասիրել ենք Ասորիսանի նահանգային գրասենյակի, քաղաքացիական և զինվորական նահանգապետների, մաքսատան, արհեստավորական վարչութեան և ուրիշ ֆոնդերը, որտեղ պահպանվում են նյութեր Ասորիսանի քննաչութեան /այդ թվում և հայերի/ կյանքի տարբեր կողմերի մասին:

Մոսկվայի՝ Հին ակտերի Ռուսաստանի պետական արխիվում մենք նաև ենք Սևնաոի, Կոմերց-կոլեգիայի, Մանուֆակտուր-կոլեգիայի, Ռուսաստանի Հայաստանի հետ առնչութիւնների, Տեղական հաստատութիւնների կազմակերպչական գրքերի հավաքածուի և ուրիշ այն ֆոնդերը, որոնք ընդգրկում են տեղեկութիւններ Ասորիսանի առևտրի և արդյունաբերութեան /որտեղ մեծ դեր է խաղացել հայ բնակչութիւնը/ մասին, տեղեկագրեր՝ առանձին ձեռնարկութիւնների վերաբերյալ, առուծախի ակտեր և այլ փաստաթղթեր 18-րդ դարի քաղաքական և տնտեսական կյանքի մասին, Տեղեկութիւններ Ռուսաստանի 18-րդ դարի ուղեգրական և դիվանագիտական միջոցառումների մասին և, մասնավորապես, հայ-ուսական հարաբերութիւնների մասին պահպանվում են Մոսկվայում գտնվող Ռուսաստանի արտաքին քաղաքականութեան և ուղեգրական արխիվներում:

Ռուսաստանի պետական պատմական արխիվում /Սանկտ-Պետերբուրգ/ պահպանվում են նյութեր՝ 19-րդ դարի -20-րդ դարի սկզբի Ռուսաստանի պատմութեան վերաբերյալ: Այստեղ մենք ուսումնասիրել ենք առավելապես Կոմերցիայի նախարարի, Մանուֆակտուրաների և ներքին առևտրի դեպարտամենտի, Տարբեր առևտրերի և զանձումների դեպարտամենտի, ժողովրդական

ուսումնարաններ հիմնելու հանձնաժողովի, Այլ դավանանքների հոգևոր գործերի դեպարտամենտի, Գործադիր ոստիկանության դեպարտամենտի, Աքամելիք-Լազարյանների և այլ Ֆոնդեր: Աստրախանի 17-րդ դարի պատմության համար հատուկ հետազոտություն է ներկայացնում Աստրախանի պրիկազային պալատի Ֆոնդը, որը պահվում է Ռուսաստանի պատմության ինստիտուտի Սանկտ-Ֆեանդերգի բաժանմունքի արխիվում:

Հայաստանի գիտությունների ակադեմիան մեծ աշխատանք է կատարել սկզբնաղբյուրների հրատարակման ուղղությամբ, մասնավորապես մեզ վերաբերող հիմնահարցերի շուրջ: Հատկապես պետք է նշել վերջին տասնամյակներում ձեռնարկած ,,Հայ-ուսուական հարաբերություններ,, թեմայով փաստաթղթերի ժողովածուների հրատարակումը<sup>1</sup>: Այդ մասնաշարի հատորները հարուստ նյութեր են պարունակում Նրևանի, Մոսկվայի, Սանկտ-Ֆեանդերգի, Քրիլիսիի արխիվներից:

Ռուսաստանի արածքում 17-19-րդ դդ հայ բնակչության պատմությունն ուսումնասիրողների համար շատ կարևոր է 42-հատորյա, Ռուսաստանյան կայսրության օրենքների լիակատար ժողովածուի, հրատարակությունը<sup>2</sup>, ինչպես նաև ,,Հայ ժողովրդի պատմության տեսությունը վերաբերող ակտերի հավաքածուի,, 3-հատորյակը<sup>3</sup> և 12 հատորանոց ,,Կովկասյան հնագրական հանձնաժողովի հավաքած ակտերը<sup>4</sup>,,: նման ծավալի հայերեն հրատարակումներից պետք է նշել 19-րդ դ. վերջին -20-րդ դ. սկզբին նախաձեռնած ,,Դիւան հայոց պատմութեան,,<sup>5</sup> 13-հատորյա հրատարակությունը, որը պարունակում է հարուստ տեղեկություններ հայ ժողովրդի հասարակական և մշակութային կյանքի վերաբերյալ:

Հայաստանի մի խումբ պատմաբաններ մի շարք կարևոր ուսումնասիրություններ են կատարել մեզ հետաքրքրող հարցերի շուրջ: Հայ գաղթավայրերի պատմությունը հայ ժողովրդի պատմության բաղկացուցիչ մասն է, իսկ Հայաստանում տեղի ունեցող իրադարձությունները միտջ արժազանք էին

1 Армяно-русские отношения в XVII веке. Сборник док-в, т. I, Ереван, 1953; Армяно-русские отношения в первой трети XVIII века, т. II, ч. I, Ер. 1964, ч. 2, Ер. 1967; Армяно-русские отношения во втором тридцатилетии XVIII в., т. III, Ер. 1978; Армяно-русские отношения, т. IV, Ер. 1990.  
 2 Полное собрание законов Российской империи /ПСЗ/, тт. I- XLII, СПб., 1830.  
 3 Собрание актов, относящихся к обозрению истории армянского народа, ч. I. М. 1833, чч. II и III, М. 1838.  
 4 Акты, собранные Кавказскою Археологическою комиссиею /АКАК/, тт. I-XII, Тифлис, 1868-1904.  
 5 Դիւան հայոց պատմութեան, գրքեր Ա - ԺԳ, Քրիլիսի, 1893-1915:

գտնում սիյուդըում: Նրան 19-րդ դարի հայ ուսումնասիրողները առավելապես կանգ էին առնում քաղաքական և եկեղեցական պատմության հարցերի մասին, ապա խորհրդային շրջանի մասնագետներն աշխատել են ընդգրկել նաև սոցիալ-տնտեսական կյանքին վերաբերող հիմնահարցեր: Անմշականորեն գաղութների պատմությանը վերաբերող աշխատությունները լույս են տեսել 1950-ական թվականների վերջերից: Մեծ նշանակություն է ունեցել Ա. Գ. Աբրահամյանի ,,Համառոտ ուղղված հայ գաղթավայրերի պատմության,, երկհատորյա մենագրությունը /հատ. Ա, 1964, հատ. Բ, 1967/: Դա եղել է առաջին ընդհանրացնող ուսումնասիրությունը՝ ամբողջ աշխարհի հայ գաղթօջախների պատմության մասին: Սակայն այս աշխատությունը ունի զգալի թերություններ՝ առանձին գաղթավայրերի պատմության լուսաբանման հարցում, քանի որ այդ ժամանակ նոր է միայն սկսվել առանձին գաղութների ուսումնասիրությունը: Այդ աշխատանքը ձեռնարկվել է Հայաստանի գիտությունների ակադեմիայի պատմության ինստիտուտում, որտեղ կազմակերպվել է այդ հիմնահարցերով զբաղվող խումբ: Այդ բաժնի մասնագետների ջանքերով վերջին երեք տասնամյակները ընթացքում լույս են տեսել Վ. Ա. Միքայելյանի, Վ. Բ. Բարխուդարյանի, Ժ. Զ. Անանյանի, Լ. Ս. Գողոսյանի և այլոց մենագրությունները Ղրիմի, Նոր Նախիջևանի, Գրիգորիպոլի, Արմավիրի և Ռուսաստանի, Ռեկրանայի և այլ երկրների շատ գաղթավայրերի մասին<sup>6</sup>: Հայ համայնքների պատմության շատ հարցեր արտացոլվել են նաև 1960-1980-ական թվականներին լույս տեսնող ,,Հայ ժողովրդի պատմություն,, ակադեմիական բազմահատորյա հրատարակության էջերում: Ռուսաստանի առանձին հայ գաղթավայրերի պատմության ուսումնասիրության հիմնականում ավարտելը թույլ է տվել այդ գաղթավայրերի պատմության հիմնահարցերը ընդհանրացնել և դրանք ենթարկել միասնական հիմնադրություն: Այդ իր արտացոլումն է գտել մեր կողմից գրած /Ժ. Զ. Անանյանի համահեղինակությամբ/, Ռուսաստանի հայկական համայնքները,, աշխատության մեջ<sup>7</sup>:

Ռուսական պատմագիտական գրականությունը սկիզբ է առնում 18-րդ

6 Բարխուդարյան Վ. Բ., Նոր Նախիջևանի հայկական գաղութի պատմություն /1779-1861 թթ./, Երևան, 1967: Նույնի, Նոր Նախիջևանի հայկական գաղութի պատմություն, հատ. 2 /1861-1917/, Եր., 1985: Միքայելյան Վ. Ա., Ղրիմի հայկական գաղութի պատմություն, Եր., 1964; Նույնի, Ղրիմի հայկական գաղութի պատմություն /1801-1917/, Եր., 1970: Անանյան Ջ. Ա. Армянская колония Григориополь. Ер. 1969; Микаелян В. А. На крымской земле. Ер. 1974; Погосян Л. А. Армянская колония Армавир. Ер. 1981 и др.

7 Ананян Ж. А., Хачатурян В. А. Армянские общины России, Ер.

և նույն ժամանակներից տեղ էր հատկացվում Ռուսաստանի և Պովոլժիեի տարածաշրջանի տնտեսական և քաղաքական պատմութիւնը և մասնավորապէս՝ մեզ հետաքրքրող հարցերին՝ Ռուսաստանի արտաքին և ներքին քաղաքակա- նութիւնը, կառավարութիւնի հովանավորող վերաբերմունքին օտարերկրացի- ների /այդ թվում և հայերի/ նկատմամբ, հայ վերաբնակիչների գործու- ննութիւնը և այլն:

1950-ական թվականների վերջերին երևան են եկել առաջին ուսում- նասիրութիւնները՝ բուն Ասորիստանի հայկական գաղութի մասին, տպա- գրվել են Վ.Կ. Ռսկանյանի, Վ.Ռ. Գրիգորյանի, Ա.Ի. Յուխտի հոդվածնե- րը: Այն ժամանակ Ասորիստանում ապրող պատմաբան Ա. Յուխտը, իսկ մի քանի տարի անց երևանյան պատմաբաններ Փ. Պողոսյանը և Վ. Խաչատրյա- նը պաշտպանել են թեկնածուական ատենախոսութիւններ<sup>8</sup> և հրատարակել հոդվածներ, որտեղ ուսումնասիրվել են Ասորիստանի հայերի կյանքի տար- բեր կողմերին առնչվող կարևոր շատ հարցեր:

Դրա հետ միասին, այդ աշխատութիւնների թեմատիկ և ժամանակագրա- կան /դրանք բոլորը վերաբերում են 18-րդ դարին/ սահմանափակութիւնն պատճառով, նշված ուսումնասիրութիւնները բոլորովին չէին սպառում այն բոլոր հիմնահարցերը, որոնց լուծումը անհրաժեշտ է ինչպես Ռուս- ստանի տնտեսական և մշակութային կյանքում, այնպես էլ հայ ժողովրդ- դի պատմութիւնի մեջ չորս հարյուրամյակների ընթացքում ասորիստանա- յերի դերի հետազոտման համար: Այդ հանգամանքը թույլ է տվել մեզ օգ- տագործելով հարուստ փաստական ու վերլուծական նյութ պարունակող ար- խիվային աղբյուրներ և զբաղանութիւնը, փորձել լուծելու անհրաժեշտ խնդիրները Ասորիստանի հայ գաղութի բազմադարյան պատմութիւնը նվիրված ընդհանրացնող ուսումնասիրութիւնի մեջ:

Ատենախոսութիւնի առաջին բաժինը վերնագրված է «Ասորիստանի հայ բնակչութիւնը 16-րդ դարի կեսից - 18-րդ դարի կեսը», Դրա առաջին գլխում՝ «Ասորիստանում հայկական գաղթաբնակչության առաջացումը և ձևավոր- ւումը», ցույց է տված Պովոլժիեում հայկական գաղթաբնակչության երևան գալը, որը սկսվել է դեռ 9-10-րդ դարերում: Հայերի բնակավայրեր գո- յութիւն են ունեցել միջնադարյան Պովոլժիեի բոլոր վարչական և տնտե- սական կենտրոններում՝ խազարական իթիլում, Մեծ Բուլղարում, հորդաս- կան Սարայ-Բաթուում և Սարայ-Բերքում, խանական Կազանում և Ասորիս- տանում: Ասորիստանի /Հաջի-Թաբիստանի/ հիմնադրումը մոնղոլների կողմից վե-

<sup>8</sup> Кухт А.И. Армянская колония в Астрахани в первой половине XVIII века. Автореф. ...канд.ист.наук, Ереван, 1959; Погосян Ф.Г. Астраханский армянский судейник. Автореф. ...канд.ист.наук, Ереван, 1964; Хачатурян В.А. Армянская колония Астрахани во второй поло- вине XVIII века. Автореф. ...канд.ист.наук, Ереван, 1964.

րագրում են 13-րդ դարի վերջերին: Հավանական է, որ Ռսկե հորդայի մայրաքաղաքը Սարայ-Բաթուից Սարայ-Բերքե տեղափոխելու ժամանակ /14-րդ դարի կեսերին/ հայերի զգալի մասը Սարայ-Բաթուից վերաբնակ- վել է ոչ միայն նոր մայրաքաղաքում, այլ նաև Վոլգայի գետաբերանին ավելի մոտիկ Ասորիստանում՝ դրանով սկիզբ դնելով այդ քաղաքի հայ ա- ռաջին գաղթաբնակչին:

Պովոլժիեյի տնտեսական և քաղաքական հին կենտրոնների անկումը /Մեծ Բուլղարի մոսկովյան գործերի կողմից շախմատներ, Ռուսաս- տանի մոնղոլա-թաթարական լծից ազատագրվելու, Ռսկե հորդայի հետ ա- քաղաքային հետևանքով/ բերել է քաղաքային բնակչութիւնի կենտրոնի մանր նոր կենտրոններում՝ Կազանում և Ասորիստանում, որոնք 15-րդ դարի կեսին դարձել են ինքնուրույն խանութիւնների մայրաքաղաքներ: Այդ նոր կենտրոններում աշխուժացել է տնտեսական կյանքը: Այդտեղ ապ- րող հայ վաճառականները առևտուր էին անում Կասպից ծովի մերձափնյա քաղաքներում և մոսկովյան պետութիւնում: Պովոլժիեի միացումը Ռու- սաստանին նոր շրջան է բացում այդ երկրամասի պատմութիւնի մեջ: Չնայած որ Վոլգայի աջ ափին տեղավորված հին Ասորիստանը որևէ ավերածութիւն- ներ չի կրել Ռուսական գործը մտնելու պահին /1556-ին/, սակայն մոս- կովյան գործարարները որոշում են ընդունել բերդը և քաղաքը նոր տեղ փոխադրելու մասին: Նոր քաղաքը և Կրեմլը հիմնադրվել են 1558 թ. Վոլգայի ձախ ափին՝ հին քաղաքից 12 կմ ավելի ներքև: Այդ պահից ըս- կիզբ է առնում ժամանակակից Ասորիստանը:

16-րդ դարի կեսերին ամբողջ Պովոլժիեի միացումը Ռուսաստանին, վերջինիս ելքը դեպի Կասպից ծով և Արևելյան Մերձկովկաս, անմիջական կապերի հաստատելը Ռուսների Անդրկովկասի, Իրանի, Անդրկասպիի հետ բոլոր այս իրադարձութիւնները արմատապես փոխել են քաղաքական ուժե- րի տեղաբաշխումը տարածաշրջանում, բարենպաստ պայմաններ ստեղծել տնտեսական կյանքի զարգացման, Վոլգայի գետաբերանը կարևոր առևտրական և ռազմավարական ուղիների հանգույց դարձնելու և այդտեղ Ռուսաստանի ներքին շրջաններից և Արևելքի սահմանամերձ երկրներից բնակչութիւն ներգրավելու համար:

Ստեղծված վիճակում կարևոր դերը պատկանում էր նաև հայերին: Հա- յաստանի և Անդրկովկասի բնակչութիւնը նոր ուղղութիւն է ստացել օտարերկրյա լծից դուրս գալու համար: Շատ հայեր բնակեցվում են Աս- տորիստանում՝ հնարավորութիւն ստանալով այդտեղ իրենց գործունեու- թիւն ուղորդելու լայնացնելու համար: Աղբյուրները վկայում են, որ հայ բնակչութիւնը Ասորիստանում եղել է արդեն 16-րդ դարի երկրորդ կեսին, այսինքն՝ փաստորեն Ռուսական Ասորիստանի գոյութիւնի առաջին տարիներ-

րից<sup>9</sup>։ Ուրեմն, ի տարբերութիւն շատ ուրիշ գաղթավայրերի՝ Աստրախանի հայկական գաղթավայրը ստեղծվել է ոչ թե միանգամից, այլ աստիճանաբար։

Նրևի սկզբից հայ բնակչութեան հիմնական մասը կազմում էին այն հայերը, որոնք տեղափոխվել են հին Աստրախանից։ Հետագայում, քրիստոնեական պետութեան պայմաններում տնտեսական կյանքի կայունացումը նպաստել է Անդրկովկասից և Իրանից հայութեան նոր խմբերի ղեկի Աստրախան ներգրավելուն։ Սկզբից հայերը խմբավորվում էին այստեղ՝ գիլանական իջևանատանը, բայց աստիճանաբար նրանք զերտառուում էին բնակչութիւն հաստատել Կրեմլից ղեկի արևելք, որտեղ ձևավորվել է Աստրախանում հայկական առաջին արվարձանը /, մահալ, /: 1630-ական թվականներին այստեղ կառուցվել է հայկական իջևանատուն։ 17-րդ դարի սկզբի փաստաթղթերում մենք հանդիպում ենք հիշատակումների՝ Աստրախանում հայ քահանաների մասին։ Այդ փաստից հետևում է, որ այդ ժամանակ քաղաքում գոյութիւն ունեւր հայ եկեղեցական համայնք։

17-րդ դարի երկրորդ-երրորդ տասնամյակներում տեղի է ունենում Աստրախանի հայ բնակչութեան ավելացում։ Համայնքի աճի վերը նշված քարենպաստ պայմաններին ավելացել է այդպիսի կարևոր գործոն, ինչպիսին ուղևորական կառավարութեան հովանավորող քաղաքականութիւնն էր արևելյան առևտրականների և արհեստավորների նկատմամբ։ Այդ քաղաքականութիւնը եղել է վճռորոշ հանգամանք՝ հետագա մեկուկես-երկու հարյուրամյակներում հայերին Ռուսաստան ներգրավելու համար։

Կասպյան առևտուրը առաջատար տեղ էր զբաղեցնում Ռուսաստանի արտաքին առևտրում, իսկ Արթանգելսկի վրայով տրանզիտի հետ միասին այն շատ կարևոր օղակ էր Արևելքի՝ Եվրոպայի հետ ապրանքափոխանակութեան գործում։ Այդ պարագաներում մեծ դեր էր խաղացել Ջուղայի հայկական ընկերութիւնը, որը հիմնադրվեց 17-րդ դարի կեսերին՝ Իրանի մայրաքաղաք Սպահանի նոր Ջուղա կոչվող հայկական արվարձանի վաճառականների կողմից։ Այդ ընկերութեան և ուղևորական կառավարութեան 1667 թվին կնքված պայմանագրի համաձայն ընկերութիւնը /կոմպանիան/ ստացել է Ռուսաստանում մետաքսի առևտրի մենաշնորհ։ Աստրախանը դարձել է ընկերութեան գործառնութիւնների կարևորագույն կետը, որի շուրջ կենտրոնացել է նաև տեղի հայ բնակչութեան զգալի մասի գործունեութիւնը։ Նոր Ջուղայից եկած ընկերութեան գործիչներից և ծառայողներից շատերը նույնպես համախ դառնում էին Աստրախանի բնակիչ։ Շարունակվել է հայերի ներհոսքը նաև այլ վայրերից։

9 Российский государственный архив древних актов /РГАДА/, ф.100, 1672-1673, д.1, лл.340-341.

Փաստաթղթերը վկայում են 17-րդ դարի 2-րդ կեսին Աստրախանում հայերի կողմից տներ ձևաք բերելու և եկեղեցի կառուցելու մասին։ 18-րդ դարի սկզբից ուժեղացել է հայերի բնակեցումը նոր արվարձանում՝ քաղաքի հարավային մասում, որտեղ նախկինում ապրում էին Աստրախանից արտոլված ստրեկցներ։ Այդ ժամանակ քաղաքում բնակվող հայերի թվաքանակը մոտավորապես 200 հոգի էր, իսկ 1724 թ. առաջին մարտի համարի /, ռեիզիտի, / ժամանակ նրանց քանակը հասել է մինչև 700-800 մարդու։ Գաղութի շարունակվող ձևավորման ցուցանիշը պետք է համարել նաև հայ հասարակութեան ընտրովի ավագի /, ստարոստայի, / գոյութիւնը 18-րդ դարի առաջին քառորդում։ Նույն ժամանակաշրջանում կառուցվել է նաև հայկական քարե մայր տաճարը։

Ի տարբերութիւն քաղաքի ողու բնակչութեան, որը կանոնավոր կըր է այս կամ այն պարտականութիւնները՝ ծառայութիւն գրասենյակներում, շնչահարկ, ռեկրուտային պարհակ և այլն, Աստրախանի այլազգի բնակիչները /այլ թվում հայերը/ ազատված են եղել նշված պարտավորութիւններից, ինչպես նաև մի շարք մաքսերից, միաժամանակ նրանք զրկ են եղել ողու բնակչութեան մի շարք /օրինակ սեփական տներում և խանութներում առևտուր կատարելու/ իրավունքներից, պարտավոր էին հրտալ խանութներ և պահեստներ զբաղեցնելու, Աստրախանում բնակելու սայլակառք օգտագործելու, գինավորականների օթևանելուց ազատվելու համար և այլն։

Այնուամենայնիվ, արևելյան վերաբնակիչների քանակի նկատելի աճանհանգստացած ողուական վաճառականութիւնը պահանջում էր սահմանափակել հայերի արտոնութիւնները ինչպես առևտրաքաղաքներական ողորտում, այնպես էլ պետական հարկային համալարգում։ Այդ նպատակներին հասնելու համար առաջարկվում էր այլազգի բնակչութեանը բոնի կերպոզընցել , պոտաբամ, , , այսինքն՝ ըստ ողուսաստանյան ընդհանուր դասրի։ Սկսած 1736 թվականից ողու վաճառականները պարբերաքար իրենց պահանջներն էին ներկայացնում կառավարութեանը։ Ընդ որում դիմողները ողուճացնում էին իրենց դիմարութիւնները և չափագանցնում հայերի արտոնութիւնները։

Հայ բնակչութիւնը վճռականապես բողոքում էր ողու վաճառականրի նշված մտաղութիւնների դեմ։ Այդ հարցում հայերին օգնում էին ողուական իշխանութիւնները, որոնք հասկանում էին վերաբնակիչների խրախուսելու անհրաժեշտութիւնը։ 1746 թվականի սեպտեմբերի 17-ի Սնտի հրամանագիրը<sup>10</sup> ամրաքրել է հայերի ող մողու օտարերկրացիների

10 ИСЗ. т. XII, № 9311.

իրավական և տնտեսական արտոնութիւնները:

Դրանք էին՝ արտոնյալ մաքսեր առևտրի ու արհեստի համար, միասնական դրույք շնչահարկի և քաղաքային հավաքումների փոխարեն և այլն: Ծանրաքեռնիչ գինվորական օթևանի փոխարեն հայերը մուծում էին զուամարձ գորանոցներ կտուցելու կամ վերծելու համար:

Հատկապես կարևոր է հրամանագրի այն կետը, որը հաստատում էր Ասորխանի օտարերկրացիների դատավարութեան և ինքնավարութեան հիմունքները: Նրանք իրավունք էին ստացել իրար մեջ դատը վճռել իրենց օրենքներով: Այդ նպատակների համար հիմնավորվել է ընտրովի դատարան, որը կոչվել է նաև «,ռաֆահուգ», գերմանական տերմինով: Գատարանը սկսեց գործել 1747 թ. հունվարից և իր ֆունկցիաներով ոչ միայն դատավարութեան, այլ նաև ներքին ինքնավարութեան մարմին էր: Դրանով ավարտվել է Ասորխանում հայկական գաղութի ձևավորման գործընթացը:

Ասորխանահայերի արտոնյալ կարգավիճակի ձևավորումը հանգեցրել է հայ բնակչության հետագա աճին: 2-րդ ունիզիայի ավյալներով /1747 թ./ Ասորխանում մշտապես ապրում է 1500 հայ: Այդ գաղութը դարձել է Ասորխանի բոլոր արվարձաններից, ինչպես նաև Ռուսաստանի բոլոր հայ գաղութներից ամենամեծը և ազնիցիկը:

Երկրորդ՝ «Ասորխանի հայերի տնտեսական կյանքը 16- 18-րդ դարի կեսերին», վերնագիրը կրող գլխում նկարագրված են հայ բնակչության զբաղմունքները՝ սկսած Ռուսական Ասորխանի առաջին տարիներից: Հայերի այդ ժամանակվա հիմնական զբաղմունքը եղել է առևտուրը, քանի որ բոլոր ժամանակներում Ասորխանը եղել է առևտրական ուղիների կարևոր խաչմերուկ: Ռուսաստանին միացնելուց հետո ավելի է քարձրացել Ասորխանի դերը արևելյան առևտրում: Իրանից, Անդրկովկասից, Փուրքիայից այդպես էին բերվում գորգեր, դիպակ, մետաքս և բամբակ գործվածքներ, հում մետաքս և բամբակ, կաշի-սափյան, ոսկերչական շինվածքներ, զենք և այլն: Արևելյան վաճառականները վաճառվում և մուսուլմանով /կամ Արխանգելսկով/ հասնում էին Եվրոպա, իսկ հակառակ ուղղությամբ Եվրոպայից դեպի Արևելք էին շարժվում անգլիական ու հոլանդական վաճառականները:

16-րդ դարի 2-րդ կեսի թուրքական սպառակութիւնների 17-րդ դ. սկզբին Ռուսաստանում խոսնակ ժամանակների իրադարձութիւնների հետևանքով խախտվել են առևտրական կապերը և տարածաշրջանի ողջ տնտեսական կյանքը: Այդ ճգնաժամային հանգամանքների հաղթահարումից հետո /17-րդ դարի երկրորդ տասնամյակում/ Ռուսաստանի արևելյան առևտուրը ընդունել է կանոնավոր բնույթ և միջազգային նշանակութիւն: Տեղի է ունենում միասնական համառուսաստանյան շուկա ստեղծելու գործընթացը: Այդ

իրադարձութիւններում Ասորխանը կարևոր դեր է խաղացել: Այստեղ ավելի վաղ, քան Ռուսաստանի ուրիշ շրջաններում, երևան են գալիս կապիտալիստական հարաբերութիւնների տարրեր, արագ կերպով առաջանում է վաճառական և վաշխատուական կապիտալ, որը հետագայում վերածվում արդյունաբերական կապիտալի, գոյութիւն ունի կապիտալի նախնական կուտակում:

Ասորխանի հայերը հատկապես ներգրավված են եղել արաքին առևտրորոտում: Ինչպես նշեցինք, Պարսկաստանից ներմուծված առարկաները եղել են հիմնականում արևելյան թանկագին գործվածքներ, գորգեր, սայաներ և այլն: 17-րդ դարի կեսերին ամեն տարի Ասորխան է բերվել 900 ֆուտ մետաքս գործվածք և արտադրանք<sup>11</sup>: 1660-ական թվականներին իրանից մաքուր մետաքսի ներմուծումը հասել է տարեկան միջին հաշվով 2000 ֆուտի: Սաֆյանների ներմուծումը կազմել է տարեկան մոտ 20 հազար րուֆո /հորթի փափուկ կաշի/<sup>12</sup>: Ասորխանից արտահանելու /դեպի իրան կամ Կովկաս/ առարկաները եղել են Ռուսական գարգացող արդյունաբերության արտադրանք՝ կտավներ, մետաղյա, փայտյա, կաշվե շինվածքներ: Ավելի շատ տեղ էին զբաղում եվրոպական ապրանքները /պտորաստի հագուստեղեն, ձեռնագործութիւն, զալանտերիա, օձանելիք/, որոնք բերվում էին տրանզիտով՝ Եվրոպայից դեպի Արևելք: Ասորխանի հայեր ակտիվ մասնակցութիւն էին ցուցաբերում ինչպես ներմուծման, այնպես էլ արտահանման հետ կապված գործառնութիւններում:

Ասորխանի հայերի առևտրական գործունեութեան ակտիվացման համար ուժեղ ազդակ է ծառայել Ռուսական կառավարութեան պայմանագրերը Ջուրայի ընկերութեան հետ /1667 և 1673 թթ./: Ջուրայի ընկերութիւնը ստացել է նկատելի մաքսային արտոնութիւններ՝ բոլոր մաքսերից /բացի մեկի՝ 5-տոկոսանոցի/ ազատվելը, դեպի Ռուսաստանի ներքին շրջաններ և Եվրոպա տարանցիկ առևտրի իրավունքը, առևտրականների պահանջարկը և ճանապարհներին կրած վնասների փոխհատուցումը: Ժամանակի ընթացքում ընկերութեան անդամների արտոնութիւնները տարածվել են նաև ասորխանցի հայերի վրա և ամրացվել են 1746 թվականի վերջը նշված հրամանագրով: Առավել հարուստ հայ վաճառականներն օգտվում էին նաև Ռուս առևտրականների մոտ վարկի մշտական պահանջից: Վարկի ձևով տարածումը եղել է ապրանքադրամական հարաբերութիւնների կարևոր գործոններից:

11 Курц В.Г. Состояние России в 1650-1653 гг. по донесению Родеса. М.1914, с.15.

12 Шпаковский А.Н. Торговля Московской Руси с Персией в XVII веке. Киев,1915, с.45.



18-րդ դարի առաջին տասնամյակներում Պետրոս Ա-ի արևելյան քաղաքականության ակտիվացումը, նրա նասպյան արշավանքները, Ռուսաստանի տնտեսական կապերի ամրապնդումը Անդրկովկասի, Իրանի, Միջին Ասիայի և Հնդկաստանի հետ, ավելի նպաստել են ասորախանահայերի տնտեսական գործունեությանը: Շարունակվել է Ռուսաստանի հովանավորական քաղաքականությանը արևելյան առևտրի նկատմամբ: Պետրոս Ա-ի 1713 թ. հայտնի հրամանագիրը ձևակերպել է հայերի նկատմամբ Ռուսական առևտրական քաղաքականության սկզբունքները՝ հետագա տասնամյակների համար: Հայերի արտոնութունները հաստատվել են նաև մի շարք ուրիշ հրամանագրերով<sup>13</sup>: Չնայած հրամանագրերի և պայմանագրերի համաթափի խախտումներին, Ասորախանի հայերի վաճառականության մասնակցությունը անկասկածաբար շրջապահությունները պահպանվում էին քարձր մակարդակի վրա:

1732 թ. Ռաշտաի /Բեշտաի/ պայմանագրով թուլացավ է Իրանում Ռուսական վաճառականների անմաքս առևտուրը: Պայմանագրի այդ դրույթի տակ ընկնում էին նաև Ռուսահպատակ հայեր, որոնցից շատերը ապրել են Ասորախանում: Այդ հանգամանքը նույնպես դրական ազդեցություն է գործել հայերի գործունեության վրա: Եթե 1720-ական թվականներին ասորախանահայերի մասնակցությունը Ռուս-իրանական առևտրին չէր անցնում ընդհանուր ծավալի մի քանի տոկոսից, ապա 1740-ական թվականներին հայերի քանակը այդ գործողություններում անցել է 10 տոկոսից, իսկ Ասորախանի, Հյուսիսասիան նովկասի գյուղերի հետ առևտրում Ասորախանի հայերը առաջատար տեղ էին զբաղեցնում<sup>14</sup>:

Առևտրի ընտրանին բաղկացած է եղել նույն արևելյան գործվածքներից, շինվածքներից, ինչպես նաև մթերքից /բրինձ, մրգեր, զինի/: Գեպի հյուսիս ապրանքներ էին ուղարկվում գլխավորապես Մակարևյան տոնավաճառը: Ռուսաստանից, ծովից այն կողմ, դուրս էին քերվում մետաղա արտադրանք, մահուդ, ներկեր: Եթե 1720-1730-ական թվականներին Ասորախանի հայերի մեծ մասը զբաղվում էր ներքին առևտրով, ապա 1740-ական թվականներին՝ արտաքին: Ինչպես ցույց են տալիս արխիվային տղթյունների հիման վրա կազմված մեր աղյուսակները<sup>15</sup>, Ռուսաստանյան /համարյա բացառապես ասորախանից/ հայերը Ռուսաստան իրանական մետաքս քերելու գործում կազմում էին 1747, 1760 թթ. 60-100 տոկոս: Դրա համար մենք համաձայն չենք Ռուսաստանում Ֆեոդալիզմի էվոլյուցիոն աշխատության<sup>16</sup> հեղինակների հետ, որոնք գտնում են, թե դեռևս 1720-ական

13 ИСЗ, т. IV, № 2330, 2490, 2609.

14 РГАДА, ф. 1361, оп. 1, д. 2-6, 8.

15 Гос. архив Астраханской области /ГААО/, ф. 681, оп. 1, д. 14, лл. 127-129; РГАДА, ф. 276, оп. 1, д. 612, лл. 4-5.

16 Буганов В. И., Преображенский А. А., Тихонов Ю. Х. Эволюция феодализма в России. М. 1980, с. 237.

թվականների Ասորախանի առևտրում առաջնությունը անցել է արևելյան /հայ/ վաճառականներից Ռուսական վաճառականներին: Մեր տեղեկությունները վկայում են, որ այդ տեղի է ունեցել 18-րդ դարի վերջերին: Արտաքինից բացի Ասորախանի հայերը զբաղվել են նաև դրահետ մեկտեղ մանրածախ առևտրով:

17-րդ դարի վերջից Ասորախանի հայ բնակչության կյանքում բացի առևտրից մեծ տեղ էին զբաղեցնում նաև արհեստները: Օրինակ՝ մետաքսի արտադրանքի պահանջարկը սեփական համապատասխան արտադրության զարգացմանը: 1710 թվի մարտին, Քերեքի ափին հիմնադրվել է Վասիլևների-Խաստատովների հայտնի ասորախանյան հայկական ընտանիքի նախահայր Մաթար Վասիլևի մետաքսագործական տնտեսությունը: Հայ արհեստավորների ամենամեծ խումբը կազմում էին ջուլհակները, նրանց հետևում էին կոշկագործները, ներկաբարները, ոսկերիչները: Արդյունաբերության և արհեստի արտադրանքը աճել է տարեցտարի: Ջուլհակագործությունը առանձնանում էր արևելյան ընտրանիով՝ կուլմաշներ, խայտակապներ, բախշաներ, տափտաներ: Նման ընտրանին, կապվել է ժենություն հետ միասին, ապահովում էր Ասորախանի հայ վարպետների մրցակցության քարձր կրթությունը Ռուսաստանյան և արտասահմանյան շուկաներում:

Առենախոսության 2-րդ բաժինը վերնագրվում է, Ասորախանի հայկական գաղութը 18-րդ դարի երկրորդ կեսին, և ներկայացնում է այն հիմնահարցերի զարգացումը և խորացումը, որոնք որոշ շահով բարձրացվել են մեր թվականական համառուն տեսնախոսության մեջ: Ասորախանի հայ գաղթօջախը, որպես գաղութ /համաձայն մեր տիպաբանությանը/ ձևավորվել է հենց 18-րդ դարի կեսերին: Այդ պահից սկսվել է գաղութի բազմակողմանի զարգացման շրջանը: Կազմավորվել են ինքնավարության մարմինները, ուժեղացել է հայերի ներհույսը դեպի Ասորախան: Ամենաբարձր զարգացումը ապրեց մանածագործական արդյունաբերությունը, որտեղ հայերը առաջատար դեր էին խաղում: Կարևոր էր մտնում նրանց դերը և Ռուսաստանի արևելյան առևտրի մեջ: Ամրացել են Ասորախանի հայերի կապերը ազգային ազատագրական շարժման հետ: Զարգանում առաջացել են հայկական մշակութային առաջին օջախները:

3-րդ - , 18-րդ դարի 2-րդ կեսի Ասորախանի հայկական գաղութը և հայերի պայքարն իրենց վարչաիրավական կարգավիճակի ամրապնդման համար, , գլխում ցուցադրված են հիմնական այն փաստերը, որոնք բնութագրում են Ռուսաստանի կառավարության վերաբերմունքը հայ գաղթականների նկատմամբ: Մի շարք նոր ակտեր բարելավել են Ռուսաստանում հայ բնակչության հարավորությունները. հանվել են հայ եկեղեցիները կառուցելու արգելքը, վերացվել է առևտրական ընկերությունների մենա-

շնորհը, հրապարակվել է հայերի համար ևս ձեռնառու մանիֆեստը՝ ,,Նկ-  
վոր ալ՛ երկրացիների մասին,, /1763 թ./: 1769 թ. հայերին թույլա-  
տրվել է նավեր ունենալ ծովային առևտրի համար: 1779 թ. վերացվել է  
մանուֆակտուր-կալեգիան, քանի որ այն չսփազանց սահմանափակում էր  
ձեռնարկութունների գործունենութունը: Նույն թվականին որոշվել է  
Աստրախանում հայերի համար քացել հատուկ բանկ:

18-րդ դարի ընթացքում հայ բնակչութունը Աստրախանում աճել է  
20-25 անգամ և դարի վերջում հասել է հազարի /քաղաքի բնակչության  
28 հազարանոց ընդհանուր քանակից/: Դրանց էր պատկանում քաղաքի բնա-  
կելի շենքերից 20 տոկոսից ավելին, այդ թվում քարե շենքերի՝ կեսից  
ավելին: Հայերը հիմնականում կենտրոնացված էին երկու արվարժանում՝  
հին /քաղաքի կենտրոնից դեպի արևելք/ և նոր /կենտրոնից դեպի հարավ/  
,,մահալներում,, , քայց, ինչպես նրևում է գնման կայքագրերից, շա-  
տերը շենքեր են ձեռք բերել քաղաքի կենտրոնում: Հայերի մեծամասնու-  
թյունը ապրում էր նոր մահալում, որտեղ տեղավորված էին նաև հայերին  
պատկանող գրեթե քոլոր ձեռնարկութուններն ու արհեստանոցները<sup>17</sup>

Աստրախանի հայ զաղութի պատմությունն ուսումնասիրելու համար  
շատ կարևոր են այն հարցերը, որոնք կապված են նրա վարչարարական  
դրության հետ: Ի տարբերությունն Ռուսաստանի հայկական մյուս համայնը-  
ների, որոնք կամ չեն ունեցել ինքնավարություն, կամ ստացել են ար-  
տոնություններ՝ զաղութ-քաղաքի հիմնադրման պահին, Աստրախանի հայկա-  
կան իրավավարչական մարմիններն առաջացել են հայ բնակչության՝ իրենց  
իրավունքների համար երկարատև պայքարից հետո միայն: Այդ պայքարի  
առանցքը եղել է ռուս վաճառականության վերնախավի և քաղաքային իշխա-  
նությունների ձգտումը՝ հայ բնակչությանը զրկել արտոնություններից  
և առավելութուններից: Հայերն իրենց հերթին համառոտ են և հաջողու-  
թյամբ պաշտպանում էին իրենց իրավունքները՝ ընդհուպ մինչև 19-րդ  
դարի կեսերը:

Կառավարությունը հաճախ թույլ էր աչիս տառանումներ՝ մի կողմից  
անցկացնելով հովանավորական քաղաքականություն օտարերկրացիների նկատ-  
մամբ, իսկ մյուս կողմից՝ ստիպված էր հաշվի առնել ռուս վաճառականու-  
թյան շահերը: Իշխանությունների քաղաքականության անհետևողականու-  
թյան պատճառով ինքնավարության մարմինները 18-19-րդ դարերի ընթաց-  
քում կրել են մի շարք փոփոխութուններ:

Մենք պարզել և ուսումնասիրել ենք հայ վարչարարական մարմինների  
գործունենության հետևյալ հիմնական փուլերը և անվանումները.

<sup>17</sup> РГАДА, ф.615, оп.1, д.697; ГАО, ф.394, оп.1, дд.1857, 6098.

1747-1765 - հայկական դատարան կամ ոսթհուդ,

1765-1786 - հայ-ասիական դատարան,

1788-1797 - քաղաքային կանոնադրությունը չգրանցված հայերի առ-  
յան կամ հայկական առյան,

1797-1800 - սահացիների ընդհանուր դատարան,

1800-1840 - հայկական դատարան:

Մեկ փուլից մյուսին անցումն արտացոլում էր Աստրախանի հայու-  
թյան իրավական կարգավիճակի, դատական մարմնի փոփոխանների այս կամ  
այն փոփոխությունները:

Հայերի արտոնյալ կարգավիճակի վերացման փորձերը /որոնցից ամե-  
նալուրջը 1785 թ. քաղաքային կանոնադրությունն էր/ 18-րդ դարի  
2-րդ կեսին ապարդյուն են մնացել: Այդ բացատրվում է նրանով, որ  
նշված ժամանակաշրջանում հայերի տնտեսական վիճակի վատացումը բացա-  
սաբար էր ազդում Աստրախանի և տարածաշրջանի առևտրի, արդյունաբերու-  
թյան և արհեստների զարգացման վրա: Դրա համար այդ շրջանում հայերի  
պայքարն իրենց իրավունքների համար հաջող էր ընթանում: Դրա հետ մեկ-  
տեղ իրավական և սոցիալական տարբերակման առաջացումը հանգեցրել է  
հարաբերությունների սրման՝ հայ բնակչության տարբեր խմբերի միջև:  
Հիմնական բախումները տեղի էին ունենում հարկադրության բաշխման ըս-  
կըզբունքների շուրջը: Հայ վաճառականության վերնախավը և դրանից կա-  
խում ունեցող հայկական դատարանի դատավորները աշխատում էին հարկերի  
հիմնական բեռը դնել զաղութի չունևոր խավերի վրա: Դրանից բացի ու-  
նևոր վերնախավը ձգտում էր թույլ չտալ, որպեսզի չքավոր խմբերի շահե-  
րը պաշտպանողներ ընտրվեն դատավորների կազմում:

4-րդ - ,,Աստրախանի հայկական զաղութի տնտեսական կյանքը 18-րդ  
դարի երկրորդ կեսին,, վերնագիր կրող գլուխը նկարագրում է հայ  
բնակչության զբաղմունքները նշված շրջանում: Աստրախանի հայերի մեծ  
մասը ուղղակի կամ անուղղակի զբաղված է եղել առևտրի ոլորտում: Այդ  
ժամանակ Աստրախանը առաջատար դիրք էր զբաղել Ռուսաստանի արևելյան  
առևտրի մեջ: Ամբողջ ներմուծման /60-70 տոկոսը/ կարևորագույն հոտ-  
վածը եղել է մետաքսը:

Առևնախոսության մեջ բերված և աղյուսակների ձևով ներկայացված  
արխիվային փաստաթղթերի ավյալները ցույց են աչիս, որ մետաքսի 70-  
80 տոկոսը ներմուծվում էին հայ /գլխավորապես աստրախանցի/ վաճառա-  
կանների կողմից<sup>18</sup>: Աստրախանի հայերը մասնակցում էին Ռուսաստան նաև  
ուրիշ ապրանքների ներմուծման գործում՝ բամբակեղեն, ներկեր, մրգեր,

<sup>18</sup> РГАДА, ф.276, оп.1, д.612, лл.4-5; ф.397, оп.1, д.113, л.

ինչպես նաև ուսաստանից ուսական ապրանքների /մետաղ, ամանեղեն, հայելիներ/արտահանելու և եվրոպական ապրանքների /մահուղ, շաքար, պերճանքի առարկաներ/ տարանցիկ առևտրում: Ընդ որում Աստրախանի վրայով ամբողջ առևտրի մեջ հայերի տեսակարար կշիռը զրեթե մինչև 18-րդ դարի վերջը անցնում էր 50 տոկոսից:

1790 թ. փաստաթղթերից մեկը ցույց է տալիս այն տարբերությունը, որ գոյություն է ունեցել Աստրախանի տարբեր աստիճանների /,,գիլդիաների,,/ և ազգերի վաճառականների գույքային դրույթյան միջև: Վաճառականները զբաղվում էին ըստ գիլդիաների՝ համապատասխան իրենց ունեցվածքի: Առաջին գիլդիային /կապիտալը 10-ից 50 հազար ուրբլի/ պատկանում էին 11 հայ առևտրական, երկրորդին՝ /5-ից 10 հազար ուրբլի/՝ 16, իսկ երրորդին /մեկից 5 հազար ուրբլի/՝ 172 հայ<sup>19</sup>: Հաշվառումները ցույց են տվել, որ առաջին գիլդիայի վաճառականությունը կազմել էր հայերի մոտ 1/20-րդ մասը բոլոր վաճառականների, ուսանների մոտ 1/30-րդը, իսկ թափարների մոտ միայն մեկը 67 վաճառականներից:

3-րդ գիլդիայի տոկոսը հայերի մեջ ընդհանրապես ավելի ցածր էր, քան մյուսներինը: Դա, մեր կարծիքով, բացատրվում է ուսական կառավարության հովանավորչական քաղաքականությամբ, քանի որ դրա հետևանքով հատկապես հայ խոշոր վաճառականությունը կարող էր իր ձեռքում կենտրոնացնել կապիտալի մեծ մասը: Յուրաքանչյուր հայ վաճառականի արամադրության տակ միջին հաշվով եղել է 2246 ուրբլի, այն դեպքում, երբ ուսական վաճառականները ունեին 1740 ուրբլի, իսկ թափարները՝ 1433 ո.:

Արևիվային նյութերից երևում են այն ուղղությունները, որտեղից ուղարկվում էին Աստրախանի վաճառականների ապրանքները: Արտաքին առևտուրը իրագործվել է գլխավորապես իրանի հետ՝ ծովով ու ցամաքով, կասպից ծովի արևմտյան ափով: Դեպի հյուսիս ապրանքը ուղարկվում էր Մակարևյան տոնավաճառ, Մոսկվա, Քեմերբուրգ, Ուրալ:

Ռուսաստանում մետաքսյա և բամբակյա գործվածքների պահանջարկի աճը առաջացրել է մանածագործական արտադրության զարգացում: Աստրախանը եղել է այդ արդյունաբերության կարևորագույն կենտրոններից մեկը: Նրա աշխարհագրական դիրքը նպաստել է հումքի՝ մետաքսի, բամբակի, ներկանյութերի ստացմանը: Աստրախանում ապրել են արևելքից եկած բնակիչները, որոնք վարպետորեն են տիրապետել արևելյան գործվածքների մշակմանը: Այդ գործոնը նպաստել է քաղաքում մանածագործության մասնագիտացմանը:

Աստրախանում մետաքսագործական առաջին Փաբրիկան հիմնադրել են

<sup>19</sup> ГААО, ф.433, оп.І, д.35, лл.І4-26, 33-38, 45-49.

հայ Օսիպ Իզբիլևը և Սոսիան Տիկրյանսկին 1734 թվականին: 1755 թ. Աստրախանում եղել է 4, իսկ 1769-ին՝ 9 ,,հրամանագրային,, , այսինքն ցարական հրամանագրով ստեղծված և Մանուֆակտուր-կոլեգիայի գերատեսչությանը կցված մետաքսագործական Փաբրիկա, որոնց հաստոցների ընդհանուր քանակը հավասար էր 153-ի: 9-ից ամենախոշոր 5 Փաբրիկաները՝ 113 հաստոցով պատկանել է հայերին<sup>20</sup>: Հետագայում հայերի ձեռքին է կենտրոնացել քաղաքի նշված արտադրության մեծ մասը: Նույնը կարելի է ասել նաև Աստրախանի բամբակեղենի արտադրության մասին: 1787 թվի տվյալներով Աստրախանի հայերին է պատկանել այդ մյուսի 163 Փաբրիկա՝ ավելի քան 700 հաստոցով<sup>21</sup>: Չնայած Փաբրիկաների քանակի հարաբերական կրճատմանը, 18-րդ դարի վերջին մետաքսագործական և բամբակագործական արտադրության մեծ մասը պատկանելիս է եղել հայերին:

Մետաքսագործական արդյունաբերության ընտրանու մեջ մտնում էին ջողեր /Փափաներ/, առլաններ, զոտիներ /կաշակներ/, զլխաշորեր: Բամբակի արտադրանքը ներկայացնում էին նույնպես ջողեր, խառակտավներ, կումաչներ և այլն: Արևիվային տեղեկությունները թույլ են տալիս տեսնախոսության մեջ ցույց տալ առանձին Փաբրիկաների արտադրողականությունը, ստացված շահույթի շահերը, ինչպես նաև որոշել և աղյուսակներով ներկայացնել Աստրախանի բոլոր Փաբրիկաների արտադրության ընտրանին և քանակը, դրանց բաժինը՝ Մանուֆակտուր-կոլեգիայի բոլոր ձեռնարկությունների համապատասխան արտադրության մեջ:

Աշխատության մեջ հարց է բարձրացվում 18-րդ դարի Աստրախանի ձեռնարկությունների տնտեսության սոցիալական բնույթի մասին: Մանածագործական արդյունաբերության մեջ և, մասնավորապես, Աստրախանի տարածաշրջանում, որի համար յուրահատուկ է շուկայից մեծ կախվածությունը՝ աշխարհագրական մեկուսացվածության և նոսր բնակեցվածության պատճառով, տնտեսական հարաբերությունները արմատորեն տարբերվում էին Ռուսաստանի մյուս շրջանների ճորտատիրական հարաբերություններից: Ռուսաստանում դեռ նոր էր տարածվում վարձու աշխատանքը, բայց Աստրախանում աշխատանքի այդ ձևը արդեն զերակշռող էր, որը և նպաստել է տեղի արդյունաբերության մեջ կապիտալիստական հարաբերությունների զարգացմանը:

Չնայած հայ արհեստավորներից շատերը Աստրախանում դարձել են Փաբրիկայի տերեր, կամ բանվորներ, այնուամենայնիվ արհեստավորների տեսակարար կշիռը մնացել է բարձր: Նույնիսկ Փաբրիկաներից շատերը փաստ-

20 РГАДА, ф.І9, оп.І, д.40, лл.ІІ3 об.-ІІ4.

21 Сборник Русского исторического общества, т.І34, СПб, І9ІІ, сс.І66-І67.

րեն մ'նում էին արհեստանոցի մակարդակի վրա: ձեռնարկութունների նկարագրութունները հաստատում են այդ փաստը: Փաբրիկաների տերերը բացի վարձու աշխատանքից, օգտագործում էին նաև արհեստավորին պատվեր տալու ձևը: Օգտագործվել է նաև տնայնագործների /հասկապես կանանց/ աշխատանքը:

Շատ դեպքերում նույն մարդիկ հանդես են գալիս նույն ժամանակաշրջանի փաստաթղթերում և՛ որպես արհեստավոր, և՛ որպես Փաբրիկանտ, և՛ որպես քաղցենի ու նույնիսկ վաճառական: Այդ պատճառով դժվարանում էր հայ արհեստավորների իրավիճակի որոշումը: 1785 թ. արհեստավորական կանոնադրութունը և 1799 թ. արհեստավորական կանոնագրութունը, որոնք պարտավորեցնում էին գրանցվել թուր արհեստավորներին, արդյունքի չէին բերում հայերի միջավայրում, քանի որ նշված օրենսդրութունները ազատութուն էր տալիս հայերին բուն գրանցումից: Դրանով հաստատվում է արտադրամասային /ցեխային/ կառուցվածքի աստիճանական մեռնելը: Աստրախանի հայ բնակչութունը ապրել է նաև հասարակական և մշակութային ակտիվ կյանքով:

Առեւտրային 5-րդ ցլուկը նվիրված է 18-րդ դարի Աստրախանի հայերի հասարակական և մշակութային կյանքին: Հայերը բաժանում էին հարազատ ժողովրդի դարավոր ակնկալումները ազատագրվելու մասին և աշխատում էին ամեն կերպ աջակցել այդ ակնկալիքների իրականացմանը: Աստրախանը ռազմավարական իր հարմար դիրքի շնորհիվ դարձել է Ռուսաստանի ռազմական և դիվանագիտական միջոցառումների ելակետ: Աստրախանի հետ են կապված հայ ազատագրական շարժման այնպիսի ակնավոր գործիչների անուններ, ինչպիսիք են Իսրայել Օրին, Հովսեփ Էմինը, Մովսես Բաղրամյանը, Լազարյանների ընտանիքը, Հովսեփ Արդությանը և շատ ուրիշներ: 18-րդ դարի կեսերին Աստրախանում էր տեղավորված հայկական և հայ-վրացական էսկադրոնների հրամանատարութունը: Վերջապես Աստրախանը Ռուսաստանի հայերի թեմական կենտրոնն էր: Առեւտրային ցլուկում մեջբերված փաստերը ցույց են տալիս, որ Աստրախանի հայերի կապերը հայ ժողովրդի հասարակական, քաղաքական կյանքի հետ շատ բազմաբնույթ են եղել՝ սկսած հայրենիքի ազատագրման նախագծերը կազմակուց մինչև մարտական գործողութուններին անձամբ մասնակցելը:

Ռուսաստանում հայ բնակչության արագ ակնկալման շնորհիվ հարց է հարուցվել ռուսահայերի առանձին թեմ կազմակերպելու մասին: Թեմի կենտրոնն Աստրախան էր: Թեպետ Աստրախանում և մյուս հայ գաղութներում գոյութուն են ունեցել ինքնավարութային մարմիններ, այնուամենայնիվ, հայկական եկեղեցիներ եղել է միակ մասնավոր համագային ինստիտուտը, որը պահպանել է թուր հայերի կապն ու միասնութունը ինչպես զարթավայրերում, այնպես էլ մայր հայրենիքի հետ: Ընդ որում, հայկական

պետականութային բացակայութային պայմաններում հայ լուսավորչական եկեղեցու և նրա ներկայացուցիչների գործունեութունը համախ ստան ում էր շեշտված քաղաքական բնույթ: Այդպիսի պարագաներում շատ մեծ է եղել նաև Աստրախանի հայոց թեմի դերը:

Թեմը կազմավորվել է 1717 թ. և հենց սկզբից ևեթ նրա գործունեութային վրա ազդեցութուն են թողել էջմիածնի և Գանձասարի կաթողիկոսների մրցակցութունը՝ այդ կարևոր թեմի վրա հսկողութուն պահպանելու հարցում: Աշխատութային մեջ վերլուծութային է ենթարկված մրցակցութային շարժառիթները և Աստրախանի հայ համայնքի դիրքը այդ աթոռների միջև ծավալված վեճում: Նկարագրված է նաև թեմի առաջնորդների, հատկապես Հովսեփ արքեպիսկոպոս Արդությանի գործունեութունը, որը 1773 թվականից սկսած գլխավորել էր թեմը և նկատելի չափով քարձրացրել նրա և Աստրախանի համայնքի նշանակութունը հայ ժողովրդի հասարակական և մշակութային կյանքում, հայ-ռուսական քաղաքական կապերի ամրապնդման գործում:

Աստրախանի հայերի տնտեսական ու քաղաքական ակտիվ գործունեութունը վկայում է, որ նրանց մեջ քիչ չեն եղել կիրթ ու զարգացած մարդիկ: Այդ մասին հետաքրքիր տեղեկութուններ են հաղորդում Մաշտոցի անվան Մատենադարանում պահպանվող մի շարք ձեռագրեր, որոնք գրվել են Աստրախանում՝ 18-րդ դարում կամ պատկանելիս են եղել Աստրախանցի հայերին, երբ տպագիր գրքերը դեռևս տարածված չէին այդ ժամանակաշրջանում:

Առևտրով և արդյունաբերութային գործվելու, ինքնավարութային մարմիններում աշխատելու համար անհրաժեշտ են եղել համապատասխան կրթութուն ունեցող մասնագետներ: 18-րդ դարի վերջին քառորդում պատրաստվել են մի քանի նախագծեր՝ Աստրախանում հայկական դպրոց բացելու համար: Մի քանի փաստաթղթեր վկայում են, որ 1780-ական թթ. Աստրախանում եղել է հայկական փոքր դպրոց<sup>22</sup>:

18-րդ դարի վերջերին Աստրախանի հայերի հասարակական-մշակութային կյանքում մեծ է եղել տեղի տպարանի դերը: Դա Գ. Խաղարյանի տպարանն էր, որը դեռևս 1780 թ. Լոնդոնից Գետերբուրգ է բերվել և հայկական առաջին տպարանն էր Ռուսաստանում: 1788 թ. Խաղարյանի մահից հետո Հ. Արդությանը հանգանակութուն է կազմակերպում և գնում այդ տպարանը հայոց թեմի համար և այն տեղափոխում՝ սկզբում նոր նախիջևան, ապա՝ 1796 թ. Աստրախան: Մեզ հաղորդվել է տպագրել, որ 1796-1800 թվականներին ընթացքում Աստրախանում տպագրվել է հայերեն 6 գիրք:

<sup>22</sup> Դիւան հայոց պատմութային, Գիրք Թ, էջ 183-184; Российский государственный исторический архив /РГИА/, ф.730, оп.2, д.1835, л.2

Ատենախոսութեան 3-րդ բաժինը վերազրկած է , Ասորախանի հայկական գաղութը 19-րդ դարի առաջին կեսին , : Այն սկսվում է 6-րդ գլխով , Ասորախանի հայերի իրավական դրոււթյունը 19-րդ դարի առաջին կեսին , : 19-րդ դարի առաջին կեսին հայերի քանակը Ասորախանում անցնում էր 5 հազարից<sup>23</sup> : Հայերը կազմում էին քաղաքի բնակչութեան մոտ 25 տոկոսը և քանակութեամբ եղել են երկրորդ ազգային խումբը ռուսներից հետո : Այդ թիվը գրեթե չի փոխվել ամբողջ 19-րդ դարի ընթացքում, բայց կըր- մաովել է հայ բնակչութեան տոկոսը՝ քաղաքի բնակիչների ընդհանուր թվի ավելացման հետևանքով : Հայերի թիվը չէր աճում, քանի որ Անդրկով- կասը Ռուսաստանին միացնելուց հետո հայ գաղթականների ներհոսքը փաս- տորեն դադարեցվել էր :

Մինչև 19-րդ դարի կեսերը պահպանվել է Ասորախանի հայերի արտոնյալ կարգավիճակը : Միաժամանակ ուժեղացած ռուս վաճառականութեանը շարուն- նակել է ճնշումը իշխանութեանը վրա՝ հայերի հատուկ իրավունքները վերացնելու նպատակով : Ատենախոսութեանում փորձ է արված հետազոտել մեզ հետաքրքրող շրջանի Ռուսաստանի համապատասխան օրենսդրութեանը և որոշել հայերի՝ իրենց իրավունքները պահպանելու համար պայքարի փու- լերը :

Ասորախանի հայերի հատուկ կարգավիճակի իրավական հիմքը 19-րդ դ. առաջին կեսին եղել է Պավել կայսեր 1799 թ. հեղեմբերի 28-ի շնոր- հագիրը<sup>24</sup>, որը հիմնականում հաստատում էր Ասորախանի և Ռուսաստանի մի քանի քաղաքների հայ բնակչութեան այն իրավունքները, որոնք շնորհվել էին նրան դեռևս 18-րդ դարի կեսերին : Նյս գլխում մեջբերված է Ասորա- խանի հայերի ինչպես իրավունքների և արտոնութեանների, այնպես էլ պարտավորութեանների ու պահպանների նկարագրութեանը :

Ալեքսանդր Առաջին կայսրի 1807 թ. հունվարի 1-ի մանիֆեստը<sup>25</sup> Ռուսաստանում բնագլուխ հայերի վրա նորից տարածել է 1785 թվականի Քաղաքային կանոնադրութեան գործողութեանը : Այն հարված էր հասցնում հայերի կարգավիճակի կարևոր կողմերին, քանի որ նախկին արտոնութեան- ները /նախ և առաջ արտաքին առևտրի վերաբերյալ / մանիֆեստով պահպանվել են միայն առաջին կարգի վաճառականների համար, իսկ այս կարգում զը- րանցվելու համար անհրաժեշտ էր բարձր գույքային արտոնակարգ՝ 16 հա- զար ռուբլու չափով : Արտաքին առևտրով հայերը կարող էին զբաղվել ընտ- րելով օտարերկրացիների կարգավիճակը, բայց նման դեպքում էլ նրանք

23 АКАК, т. I, с. 715, т. III, с. 716.  
 24 Армяно-русские отношения в XVIII веке, т. IV. 1760-1800, Вре- ван, 1990, сс. 521-522.  
 25 ПСЗ, т. XXIX, № 22.418.

զրկվելու էին մանրածախ առևտրի իրավունքից, այն դեպքում, երբ այդ առևտրով էր զբաղված հայերի մեծ տոկոսը :

Առաջացած բարդութեանները զգալի չափով արտացոլվեցին Ասորախանի տնտեսական կյանքում : Հայերի և նույնիսկ տեղական իշխանութեանների բազմաթիվ դիմումներից հետո կայսրը ստիպված է լինում 1808 թվականի նոյեմբերի 30-ին կարգադրել անորոշ ժամկետով հետաձգել հայերի համառու- սական դասերում պարտավոր գրանցումը : Իրանով սկսվել է Ասորախանի հա- յերի կարգավիճակի պատմութեան մի նոր փուլ, որը բնութագրվում է նը- րանով, որ 1807 թվականի մանիֆեստի գործադրման հետաձգումը ժամանակա- վոր բնույթ էր կրում : Սրա հետ մեկտեղ տարեցատրի ավելանում է հայկա- կան համայնքի պարտավորութեանների /տեղական, բնակարանային և այլ / քանակն ու չափերը :

Հայերի արտոնութեանների կրճատման նոր փորձը կապված էր 1824 թ. ընդունված նոր գելդիական կանոնադրութեան հետ<sup>26</sup>, որի հեղինակը Ռուսաս- տանի ֆինանսների նախարար Մ. Կանկրինն էր : Վերջինիս բարեփոխութեանը սահմանում էր , , արհեստագործական վկայագրերի , , կարգը՝ ձեռներեցու-

թյամբ զբաղվելու համար : Այդ վկայագիրը ձեռք բերելու համար 1-ին գելդիայի վաճառականները տարեկան պետք է մուծեին 2200 ռուբլի, 2-րդ գելդիայինը՝ 880, 3-րդինը՝ 220 ռուբլի, իսկ քաղաքները՝ 40-ից 120 ռուբլի : Բացի այդ մտցվել է նաև հատուկ տարբերակված հարկ՝ խանութ- ներում առևտուր կատարելու, ինչպես նաև այլ սահմանափակումների համար : Այս որոշումները բողոքների մի նոր ալիք են բարձրացրել և համեմատաբար կարճ ժամանակի ընթացքում այդ նորմուծութեանների մեծ մասը վերացվել է :

Սակայն կառավարական շրջաններում պարտավել են նոր որոշումներ՝ ուղղված հայերի արտոնութեանների դեմ : 1831 թ. հունիսի 2-ին նիկոլայ Ա-ն հաստատել է նախարարների կոմիտեի կանոնադրութեանը, որի համաձայն 1799 թվին սահմանված արտոնութեանները պահպանվելու էին միայն Ասորա- խանի 390 այն հայերի համար, ովքեր նշված են 1795 թ. մարդահամարի ցու- ցակներում : Այս իրավական հիմնավորումը սխալ էր, քանի որ 1795 թվականի մարդահամարին մասնակցել են միայն Քաղաքային կանոնադրութեամբ զբաղ- ված հայերը, որոնք կազմում էին հայ համայնքի փոքրամասնութեանը : 2-նայն ձևին սխալ մոտեցմանը, 1831 թ. կանոնադրութեանը կիրառվել է հայերի նկատմամբ :

Բարձրացվել է նաև Հայկական դատարանի վերացման հարցը : Հայ բնակ- չութեանը մի քանի տարի շարունակ աշխատում էր պայքարել դատարանի

26 Там же, т. XXXIX, № 30. II 5.

պահպանման անհրաժեշտութիւնը, սակայն ապարդյուն: 1831 թվականից սկսվել է հայերի իրավունքների ու արտոնութիւնների աստիճանական վերացման ժամանակաշրջանը: Ստանալով կենտրոնական և տեղական գերատեսչութիւնների քննահանուր եզրակացութիւնը, Նիկոլայ Ա-ն 1840 թ. մարտի 27-ին հրամանագրով<sup>27</sup> վերացրել է Ասորբանի, Ղալարի և Մոզդոկի հայկական դատարանների գործունեութիւնը:

Ռուսական առևտրաարդյունաբերական բուրժուազիայի դիրքերի ամրապնդումը 19-րդ դարի 30-ական թվականներին թույլ է տվել նրան ի վերջո հաղթել բազմամյա մրցակցութիւնում՝ արտոնյալ օտարերկրացիների դեմ երկրի հարավային շրջաններում: Նման արդյունքի հասնելուն նպաստել է նաև Ասորբանի տնտեսական և քաղաքական դերի թուլացումը, Անդրկովկասը Ռուսաստանին միացնելը, պետական սահմանները Ասորբանից հեռացնելը և Ռուսաստանը Կովկասի հետ միացնող նոր ուղիների /Ռուստովի միջոցով/ զարգացումը:

7-րդ գլխում դիտարկվում է, Ասորբանի հայերի տնտեսական գործունեութիւնը 19-րդ դարի առաջին կեսին, : Ինչպես նախկինում, նշված ժամանակաշրջանում ևս Ասորբանի հայ բնակչութիւնը գլխավորապես ըզբաղվել է առևտրով և արհեստներով: Սակայն 18-րդ դարի համեմատութեամբ Ասորբանի առևտրական դերը նշանակալի չափով փոփոխութիւններ է կրել: Անդրկովկասը Ռուսաստանին միացնելու հետևանքով առևտուրը այդ տարածաշրջանի հետ ներքին ոլորտից անցել է արաբքին ոլորտ: Գոնի և Կուրանի շրջաններով նոր ճանապարհների կառուցումը թուլացրել է Ասորբանի բացառիկ դրութիւնը՝ ռազմական ու տնտեսական ուղիների վրա: Սակայն Ասորբանը պահպանում է իր կարևոր նշանակութիւնը շրային ճանապարհների վրա, մինչև իսկ մեծացել է շոգենավագնացութեան գարգացման հետ:

Ասորբանի առևտուր էր կառարում Գովոլմիեի քաղաքների և Ուրալի կազակների հետ: Անդրկովկասի հետ առևտուրն իրագործվում էր երկու ճանապարհով՝ ծովային և ցամաքային: Ստորին Վոլգայով ուղարկվում էր հացը, անասնաբայրը, արդյունաբերական ապրանքները: Տարանցիկ առևտրի ուղիներում Ասորբանը հանդիսանում էր փոխաբեռնման կետ, որտեղ գետանավերից բեռները փոխադրվում էին ծովանավերի վրա և հակառակը: Ասորբանը և նրա տարածաշրջանը վաճառքի էր հանում ձկնեղեն, բանջարեղեն, ինչպես նաև անվում ալրոդ շուկ հակաարդյունաբերութեան գործվածքներ: Անդրկովկասից Ասորբանով ներմուծվում էին մետաքս, չոր մրգեր, գինի: Այս ապրանքներն ուղարկվում էին Նիժնի Նովգորոդի տոնավաճառ, Ռուսաստանի այլ քաղաքներ, ինչպես նաև Եվրոպա:

27 ИСЗ-2, СПб, 1841, т. XV, № 13.302.

Ռուսաստանից դեպի Իրան արտահանվել է երկաթ, պղինձ, ամանեղեն, կտորեղեն, գործվածքներ: Իսկ Իրանից ներմուծվել է մետաքս, բամբակ, մանվածք և մրգեր: Ռուս-իրանական առևտուրը անկում է ապրել 1804-1813 և 1826-1828 թվականները պատերազմական ժամանակաշրջաններում, բայց հետագայում առևտրի ծավալը դարձյալ վերականգնվել է: Ընդ որում Ռուսաստանի առևտրի մեջ ներմուծումը անցնում էր արտահանումից:

Աշխատութեան մեջ մեջբերվում են պահպանված ավյալները ասորբանահայութեան՝ առևտրական գործունեութեան մեջ ունեցած տեսակարար կշռի վերաբերյալ: Այսպես, օրինակ, 1812-1821 թվականներին հայերը Իրանից Ասորբան են բերել 9 միլիոնի արծողութեամբ ապրանքներ, որը կազմել է Ասորբանի նավահանգստի ամբողջ առևտրի 23,5 տոկոսը և արտահանել են 4,4 միլիոն ռուբլու ապրանք կամ դուրս բերվող ապրանքների ծավալի 12,1 տոկոսը<sup>28</sup>: Հետագայում հայերի մասնակցութիւնը արաբքին առևտրում աստիճանաբար նվազել է:

Այդ ժամանակաշրջանում Ասորբանի հայ վաճառականութիւնը գլխավոր ուշադրութիւնը դարձնում էր ներքին առևտրի վրա: 1844 թվականի ավյալներով<sup>29</sup>, հայերը կազմում էին Նիժնի Նովգորոդի տոնավաճառի մասնակիցների 10 տոկոսը /14.420-ից 1473/ և քանակով եղել են երկրորդ ազգային խումբը՝ ռուսներից հետո, ընդ որում նրանք հիմնականում ասորբանցիներ էին: 19-րդ դարի կեսից տոնավաճառում գործում էր հայկական եկեղեցի, որը սպասավորել է Ասորբանի հայ քահանաներից մեկը: Ասորբանի հայկական դատարանի փաստաթղթերից երևում է, որ ուղի հայերը ստանում էին հատուկ անձնագրեր՝ ,բոլոր Ռուսաստանի քաղաքներ,, առևտուր կատարելու համար:

Հայերն Ասորբանում զբաղվում էին մանրածախ առևտրով՝ վարձու խանութներում: Հին հայկական իջևանատունն աստիճանաբար հասավ անկման: Խանութների վարձը բավականաչափ թանկանում էր: Վիճակը նույնն էր նաև փոխադրամիջոցների գծով /հատկապես նավերի գծով/: Վաճառականներից ոմանք ձեռք էին բերում սեփական նավեր: 1820-ական թվականներին Վոլգայով նավերի ել են առաջին շոգենավերը, դրանք չորսն էին, որոնցից երկուսը պատկանում էին հայերին և որոնք Վոլգայով երթնեկել են մինչև 1842 թ.: Այդ երկու հայերը Ասորբանից էին՝ Հալաբյանը և Յարալյանը: Ընդ որում Յարալյանի նավը պատկանում էր ամենաուժեղ նավերի թվին:

28 Журн. "Северный архив", ч. 29, СПб, 1827, с. 93.

29 Мельников П. Нижегородская ярмарка в 1843, 1844 и 1845 гг. Н.Новгород, 1846, с. 286.

Այսպիսով, չնայած որոշ բարդութիւններով՝ Աստրախանի հայերի տնտեսական շահերի ծավալը բավական լայն էր: Տնտեսական մեթանիզմով հայերը եղել են ակտիվ տարրեր, նրանք կազմում էին Աստրախանի Ֆաբրիկաների զգալի մասը, իսկ 19-րդ դարի առաջին տասնամյակներին նույնիսկ մեծամասնութիւն էին կազմում: Նրանց ձեռքում են եղել մեծաքսագործական, օճառագործական, մոմագործական բոլոր Ֆաբրիկաները, կաշեգործական և ներկարարական գործարանների մեծ մասը<sup>30</sup>: Մանաձագործական արդյունաբերութիւնը պահպանում էր իր արեւելյան երանգը /տաճա, խայտակոսներ և այլն/: Արտադրանքը ուղարկվում և վաճառվում էր ինչպես Աստրախանում, այնպես էլ Ն. Նովոռոդում և այլ քաղաքներում: Հայերը մեծամասնութիւն էին կազմում ոչ միայն գործարանատերերի ու վարպետների, այլ նաև աշխատողների շրջանում:

Ատենախոսութիւնում ավյալներ են բերված Աստրախանի բամբակեղենի արդյունաբերութիւնի տեսակարար կշռի մասին՝ Ռուսաստանի համապատասխան արտադրութիւնի հետ համեմատաբար: 19-րդ դարի սկզբին Աստրախանի այդ մյուզի-Ֆաբրիկաները կազմում էին Ռուսաստանի համապատասխան արդյունաբերութիւնի չորրորդ մասը և ողջ աշխատողների 15 տոկոսը, այսինքն՝ Աստրախանի գործարանները եղել են ավելի փոքր: Նույնը կարելի է ասել նաև մեծաքսագործական արդյունաբերութիւնի մասին: Ֆաբրիկաների, հաստոցների և բշխատողների քանակը 19-րդ դարում մշտապես կրճատվում էր: Այս հանգամանքը բացատրվում է նրանով, որ Աստրախանի մանաձագործական արդյունաբերութիւնը ընդ որովհ չի հարմարվել մրցութիւնը և տեխնիկական գործընթացի նոր պայմաններին: 19-րդ դարում նա օգտագործում էր այն տեխնիկան և առաջարկում էր այն արտադրանքը, ինչ եղել էր 18-րդ դարում<sup>31</sup>:

Ջուլհակագործութիւնի հետ կազմա է եղել նաև ներկարարութիւնը: 1827 թվականին Աստրախանում եղած 18 ներկատներից 11-ը պատկանելիս է եղել հայերին, որոնք տարեկան արտադրել են 6100 փութ ներկված կըտավ կամ քաղաքի ամբողջ արտադրութիւնի մոտ 80 տոկոսը<sup>32</sup>: Բայց բամբակագործութիւնի և մեծաքսագործութիւնի նման, ներկարարական արտադրութիւնը նույնպես աստիճանաբար դադարեցվել է 19-րդ դարի 2-րդ կեսին: 19-րդ դարի 2-րդ կեսին հայերին պատկանող կաշեգործական գործանոցները ավելի էին քաղաքի համապատասխան արտադրանքի 70 տոկոսը<sup>33</sup>, բայց

30 Список фабрикантов и заводчиков Российской империи 1832 года. Часть первая. СПб, 1833, сс.5-9.

31 Любомиров П.Г. Очерки истории русской промышленности. М. 1947, с. 555.

32 ГААО, ф. I, оп. 5, д. 27.

33 РГИА, ф. I 8, оп. 4, д. 225, л. 45.

դարի 2-րդ կեսին այդ Ֆաբրիկաներից մնացել էին միայն մի քանիսը: Համեմատաբար դիմացկուն են եղել հայերին պատկանող օճառագործական, մոմագործական և խայտախորտ արտադրութիւնները, բայց այդ մյուզիերից յուրաքանչյուրը ունեցել է մի քանի գործանոցներ միայն:

19-րդ դարի 1-ին կեսին Աստրախանի շատ ձեռնարկութիւններում գոյութիւն չուներ որոշակի տարբերութիւն արտադրութիւնի գործարանային և արհեստավորական բնույթի միջև: Ծառ դեղերում ուժի մեջ էին մնում ցեխային կանոնները՝ համաձայն Արհեստավորական կանոնագրութիւնի, բայց միաժամանակ նույն ձեռնարկութիւնները հաշվետվութիւններ էին ներկայացնում պետական համապատասխան գերատեսչութիւններին: Հայկական արտադրամասերն ունեին իրենց հատուկ կանոնագրութիւնը, որը հաստատված էր Հայկական դատարանի կողմից: Պահպանվել են դրանցից մի քանի նմուշներ: Արտադրամասերից ամենախոշորներն էին կոշկարարական և դերձակային արտադրամասերը:

Քաղաքի արտադրամասային վարչութիւնը ձգտում էր իրեն ենթարկել նաև հայկականը, բայց հայ արհեստավորները իրաւ պայքարում էին իրենց ինքնուրույնութիւնը պահպանելու համար: Սակայն ցեխերը աստիճանաբար կորցնում էին իրենց ազգային բնույթը: Կապիտալիստական հարաբերութիւնների զարգացումը հարված էր հասցրել նաև հայ արհեստավորների ցեխային կառուցվածքին:

5-րդ գլուխը, որը կրում է «Աստրախանի հայերի մշակութային կյանքը 19-րդ դարի առաջին կեսին», վերնագիրը, նվիրված է Աստրախանում հայկական դպրոցների և եպարանների կազմակերպման պատմութիւնը: 19-րդ դարի առաջին տարիներին հայկական ուսումնարանի հիմնադրման նախաձեռնութիւնը հանդես եկավ աստրախանցի խոշոր վաճառական Նիկողայոս Աղաբաբյանը, որը այդ նպատակի համար հատկացրել էր 50 հազար ռուբլ. կապիտալ: Ն. Աղաբաբյանը ձեռք էր բերել քարե իշխանատուն և նրա սենյակների վերձից ստացված գումարը տրամադրել ուսումնարանի կարիքներին: Աղաբաբյանը բազմիցս շեշտել է, որ նպատակ ունի այդպիսի դպրոց ստեղծել, որի հրազիրը կազմած լինի գաղութի բնակչութիւնի գործնական ինտելիգենցիան: Լեզուներից, լիւրատնութիւններից և կրոնից բացի հրազիրով նախատեսված էր մտքեմանիկայի, աշխարհագրութիւնի, օրինագիտութիւնի, հաշվաբանութիւնի, մուրհակային իրավունքի, տուրքի և նման ուրիշ առարկաների դասավանդում<sup>34</sup>: Այդ հրազիրը ժամանակի դպրոցական առաջավոր հրազիրից էր:

Աղաբաբյանի դպրոցը բացվել է 1810 թվին:

34 ЦГА Татарстана, ф. 92, оп. I, д. 342, лл. 32 и об.

Կարողի ընդարձակ ծրագիրն ամբողջությամբ կյանքում չիրագործվեց՝ գլխավորապես համադասարան կադրերի բացակայության պատճառով: Դրպարողի հիմնադիր Նիկողայոս Աղաբաբյանի, ինչպես նաև նրա որդու՝ Ղըրղրոցի առաջին տեսուչ Հովհաննեսի վաղաժամ մահը ստույգացրել են շոշակելի նյութական դժվարություններ: 1822 թ. դպրոցը անցել է պաշտոնական գերատեսչության տրամադրության տակ, և այդ էջը կարող չնպաստել պաշտոնական ծրագրի հաստատմանը:

Առնախոսությունում մանրամասն շարադրված է Աղաբաբյան դպրոցի պատմությունը հասկալի առաջին տասնամյակներում: Ներկայացված են տեղեկություններ դպրոցի դասառուների մասին, դասազրքերի պատրաստման աշակերտների քանակի մասին և այլն:

19-րդ դարի 1-ին կեսին Աստրախանում բացվել են մի քանի հայկական հոգևոր դպրոցներ, մեկը՝ թեմական, մյուսը՝ կաթոլիկական-ճիզովիտական, բայց դրանք գոյատևել են կարճ ժամանակ:

1810 թ. ազգային մշտական ուսումնական հաստատության բացելուց հետո տեղի հայերի համար հարց է առաջացել նաև սպարանի գործունեությունը վերսկսելու մասին, քանի որ դա անհրաժեշտ է եղել դասազրքեր տպագրելու, թերթ հրատարակելու, մշակութային ազգային կյանքը հետագայում ևս զարգացնելու համար:

Այս անգամ Աստրախանում հայ տպագրությունը կազմակերպելու նախաձեռնությունը հանդես է եկել գիմնազիայի գերմաներենի ուսուցիչ ավստրիացի Յոզեֆ Ֆոն-Վեյսբրոուգենը: Նա տեղական իշանությունների առջև հարց է բարձրացնում երկու լեզվով՝ ռուսերեն և հայերեն, շաբաթաթերթ հրատարակելու մասին: Նա կարճ ժամանակամիջոցում հասկացել էր հայերի կարևոր դերը քաղաքի տնտեսական և հասարակական կյանքում: Հայերեն տպագրությունը կազմակերպելու համար Վեյսբրոուգենը դիմում է հայ կաթոլիկ եկեղեցու երեսփոխան և ճիզովիտական պանսիոնի տեսուչ Կոնստանտին Մանուկյանի օգնությանը: Դրանք ցանկանում էին ձեռք բերել Աստրախանի հայոց թեմին պատկանող տպարանը: Բայց հայ լուսավորչական եկեղեցին բացասական վերաբերմունք ուներ ճիզովիտների նկատմամբ և մերժում է տպարանը վաճառելու առաջարկությունը: Վեյսբրոուգենը և Մանուկյանը որոշում են կազմակերպել հայերեն նոր տպարանի պատրաստելը, որը հաջողվել է 1815 թ. 1813 թվականից լույս տեսնող ռուսերեն «Վոստոչնիե իզվեստիա», շաբաթաթերթը 1816 թ. հունվարից դարձավ երկլեզու՝ «Վոստոչնիե իզվեստիա», - «Արևելյան ծանուցմունք», անունով: Կազմակերպության համակարգի գլխավոր գրադարանում մեկը հայաբերել ենք այդ թերթի՝ առայժմ միակ հայտնի հավաքածուն, ինչպես նաև 1815 թ. լույս տեսած «Ռուսաց և հայոց այբբենական տետրակի», կորած համարվող միակ օրինակը: Այդ տպարանի գործունեությունը

և թերթի հրատարակումը դադարեցվել են 1816 թվի հուլիսին՝ հրատարակիչ Ֆոն Վեյսբրոուգենի մահվան կապակցությամբ: Արևելյան ծանուցմունքը եղել է Ռուսաստանի հայոց առաջին պարբերականը /և հայերեն առաջին պարբերականներից մեկը/:

Երկու տարի անց՝ 1818 թ. Աստրախանում վերսկսվել է հին «Խաղաղաս», տպարանի գործունեությունը: Մոտ 20 տարվա ընթացքում լույս է տեսել 11 հայերեն գիրք, այդ թվում՝ դասազրքեր: Որոշ ժամանակաշրջանում այդ տպարանը, որը գործել է մինչև 1837 թ., մնում էր որպես Ռուսաստանի հայկական միակ տպարանը:

Առնախոսության վերջին 4-րդ բաժնում շարադրված է Աստրախանի հայերի 19-րդ դարի 2-րդ կեսի - 20-րդ դարի սկզբի պատմությունը: 9-րդ գլուխը, որը վերնագրված է «Աստրախանի հայերի սոցիալ-տնտեսական դրությունը 19-րդ դարի երկրորդ կեսին-20-րդ դարի սկզբին», նվիրված է նշված շրջանում Աստրախանի հայության թվաքանակի ավելացմանը, նրա իրավական վիճակին և տնտեսա-տնտեսական գործունեությանը: Այդ շրջանը նշանավորվել է Աստրախան քաղաքի տնտեսական և ժողովրդագրական պատկերի կարուկ փոփոխությամբ: Սակավամարդ տափաստաններում և անապատներում ստեղծված ռուսական տիրապետությունների առաջավոր պահակակետերում սակավաթիվ և զգալի չափով արևելյան բնակչությունը Աստրախանը, 19-րդ դարի երկրորդ կեսին դարձել է կաթիտալիստական քաղաք, գարգացող ձկան արդյունաբերություն, շոգենավակնացություն և նավթափոխադրումների կենտրոնով:

Աստրախանի տնտեսական և ռազմավարական դերի փոփոխությունը փոխվել է նաև նրա հայ բնակչության գրադմունքի շրջանակները, հայերի դերը և տեղը քաղաքի կյանքում, ինչպես նաև հայ իրականության մեջ: Եթե 19-րդ դարի զրեթե ողջ տևողության ընթացքում հայերի քանակը Աստրախանում մնում էր նույն մակարդակի վրա՝ մոտ 5 հազար մարդ, ապա 1892 թ. տարիներին նշում են 6684-ը<sup>36</sup>, իսկ առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին՝ արդեն 7813 մարդ<sup>37</sup>: Քաղաքի բնակչությունը այդ ժամանակաշրջանում անցել է 150 հազարից:

1640 թվականին հայկական դատարանի վերացումից հետո Աստրախանի հայ բնակչությունն իրավական տեսակետից բաժանված է եղել երեք մասի: 18-րդ դարում ստացված արտոնություններից օգտվում էին միայն 1785-1795 թվականների համառուսական դասերում գրանցված 390 ժառանգները որոնց քանակ արևելաօսթի նվազում էր: Հայերը, որոնք բնակություն են

35 Տարագ /Ռիթլիս/, 1892, Կ.9, էջ 147:  
36 РТИА, ф.82I, оп.7, д.232, л.19 об.



հաստատել Աստրախանում 1799 թ. հետո, զբանջված էին ուսաստանի խավերի մեջ: Նրանց քանակը, ընդհանրապես, ավելանում էր: Մնացած հայ բնակչությունը եղել է Աստրախանում մինչև 1799 թ. բնակչություն հաստատած հայերի հետնորդները, որոնք օգտվում էին մի շարք արտոնություններից՝ ունեցած հողերի վարակի փոխարեն նրանք տալիս էին դրամավերձար, մնացած վարակների համար մուծում էին 2-ոտքլիանոց հարկ՝ մեկ ծիրից: Այդ պատճառով հայերի այդ խավը երկար ժամանակ կոչվել է, արտոնյալ,,: նրանք կազմում էին հայ համայնքի մշտող մեծամասնությունը: Բացի վաճառականությունից և քաղցենիությունից, հայերն աստիճանաբար երևան են գալիս ուրիշ խավերում՝ հոգևորականների, պետական ծառայողների, զինվորականների և նույնիսկ ազնվականների մեջ:

Ներքին ինքնավարությունը վերացվել է 1840 թվականից: Պահպանվել է միայն ընտրովի բանավոր դատարանը՝ միայն հայերի միջև բանավեճեր լուծելու համար: Հայկական հասարակությունը ձգտել է պահպանել ինքնավարություն նաև ուրիշ տարրեր, օրինակ՝ հետևել հարկերի հավաքմանը՝ հավաքել իշխանությունների համար տարբեր տեղեկություններ, ընտրել հատուկ միջնորդ /, ստարոստա, /՝ քաղաքային իշխանությունների հետ բնակչություններ վարելու համար: Իշխանությունները, ընդհանրապես, ամեն կերպ ձգտում էին հավասարեցնել հայերի իրավունքները մնացած բնակչության հետ: Հատկապես դժգոհություն էր առաջացնում ստարոստայի նշված պաշտոնը, քանի որ դրա պահպանելը կնշանակեր հայ հասարակության մանաչույցը ազգային հատկանիշով: Բազմամյա հակամարտումներից հետո հայկական ստարոստայի պաշտոնը վերացվեց 1887 թ. և դրա հետ միասին անհետացավ նաև հայերի ինքնավարության վերջին մնացուկը:

Փոխվեց նաև հայ բնակչության գբադմունքների բնույթը: Ուսաստանի արևելյան առևտրում հայերի իշխող դիրքերի փոխարեն տեղի էր ունեցել հայերի զբեթն լրիվ հեռացում արտաքին առևտրից: մեծաքսագործության և բամբակագործության ամբողջ արտադրությունը իրենց ձեռքում պահելու փոխարեն հայերի ձեռքին մնացել էր միայն կաշվի և մոմի արտադրության մի քանի գործանոցներ:

Հայերն Աստրախանում սկսել են զբաղվել մանրածախ առևտրով և ուսաստանի ներքին առևտրով: Աստրախանցի հայերից շատերն ունեին խանութներ ոչ միայն Աստրախանում, այլ նաև ուրիշ քաղաքներում, հատկապես Մոսկվայում և Պետերբուրգում, որտեղ կատարում էին գործարքներ, օգտվում էին վարկից և այլն: Հայերի առևտրի առարկաններն էին՝ գործվածքեղեն, նպարեղեն, տնտեսական ապրանքներ, ծուկ, չոր միրգ, գինի, ինչպես նաև ծխախոտ:

Հայերի համար նախկինում ավանդական արհեստների և արտադրությունների կրճատման կապակցությամբ հայ համայնքի շատ ներկայացուցիչներ

ծառայել են ու զբաղվել նաև ձեռներեցությամբ արդյունաբերության ավելի հեռանկարային ժյուղերում՝ սաճյալի և ծխախոտի արտադրության մեջ և այլն: Արհեստավորական շրջանում հայերն առավել շատ ներգրավված են եղել կաշեգործների, դերձակների, ոսկեքիչների արտադրություններում: Հայկական առանձին արտադրություններ 19-րդ դարի 2-րդ կեսին արդեն գոյություն չուներին:

Հայ ամենախոշոր ձեռներեցներից Ս. Կիանոզովը, Ա. Մեխիբենցևը, Ա. Նազարովը, Ա. Թավրիզովը և ուրիշներ աշխատում էին իրենց կապիտալները ներդնելով ավելի ժամանակակից արտադրություններում: Նրանք ձեռք էին բերում մեքենայական նոր սարքավորումներ և նկատելի դեր էին խաղում ուսական զարգացող բուրժուազիայի շարքերում:

10-րդ գլուխը, ,Աստրախանի հայերի հասարակական կյանքը 19-րդ դ. երկրորդ կեսին - 20-րդ դարի սկզբին, լուսաբանում է նշված շրջանում հայերի հասարակական, քաղաքական և եկեղեցական կյանքը: Հայկական համայնքը միշտ զգում էր հասարակական իրադրություններին մասնակից լինելու անհրաժեշտությունը ինչպես Աստրախանում, այնպես էլ մայր Հայաստանի և ուսաստանի ծավալով: Զբոսաշրջել են ազգային կյանքի նոր ձևերը՝ ծխական ժողովներ, քարեգործական ընկերություններ, հասարակական կազմակերպություններ, իսկ իր ժամանակին՝ նաև տեղի քաղաքական կուսակցությունների բաժանմունքներ:

19-րդ դարի կեսերից տարածում է գտել նյութական օգնության կազմակերպումը՝ կարիք ունեցող ընտանիքների, ուսումնական հաստատությունների, ժրբանոցների օգտին: 1841 թվին ստեղծվել է Սուրբ առաքյալներ թողեսուի և Բարդուղիմեոսի անվան քարեգործական ընկերությունը, որի նպատակն էր օգնություն ցույց տալ ընդունակ, բայց չունևոր երեխաներին: 1874 թ. կազմակերպվում է հոգևոր ուսումնական հաստատությունների հոգաբարձությունը: Դրա միջոցների զգալի մասը հավաքվում էր նվիրատվություններից: Հոգաբարձության շնորհիվ կազմակերպվել են անկեղևնոց /1875 թ./ և արհեստավորական դպրոց /1877-ին/: 1887 թվականի հոգաբարձության միջոցները՝ քարեգործական նպատակների համար, կազմել են 187 հազար ռուբլուց ավելի<sup>38</sup>:

1891 թ. բացվել է Աստրախանի հայուհյաց քարեգործական հոգաբարձական ընկերություն, որի նպատակն էր աջակցել հայ աղջիկների կրթության գործին, օգնել իգական ծխական դպրոցին, կազմակերպել ձեռագործության և տնտրություն հասավանդում և այլն: 1898 թ. ընկերության շնորհիվ բացվել է կարուձեռի դպրոցը, իսկ 1908 թ.՝ որբանոցը:

37 ,Արձագանք, /թիֆլիս/, 1887, հ. 17, էջ 256:

Աղքատախնամ հոգաբարձուք յուսնը հաջողացրել է 1871-ին հայերի համար բացել անկեւանոց, իսկ 1897 թ. դրան կից կազմակերպել է հատուկ հիվանդանոց: Հոգաբարձուք յան ծախսերը 1903-1911 թթ. կազմել են 293 հազար 367 ուսուցիչ 56 կոպեկ կամ միջին հաշվով տարեկան մոտ 33 հազար ուսուցիչ<sup>39</sup>: Նվիրատուք յուսնները կատարվում էին տարբեր ձևերով՝ կանխիկ դրամով, արժևիղթերով, եկամուտների բաժնով, կապագրերով, նյութական նվերներով, անշարժ գույքով և այլն:

Աստրախանի հայերը նյութական օգնութիւն են տրուց տալիս ոչ միայն իրենց համայնքներին, այլ նաև բոլոր հայրենակիցներին՝ այդ թվում բուն Հայաստանում, ինչպես նաև ուսուցչական և ուսանողական պետութան կարիքների համար: Ինչպես, օրինակ՝ 1812 թ. և ուսուցչական պատերազմների, տարերային արեւմտեան ու համաճարակների ժամանակ:

Քարեգործական միջոցառումներում մեծ է եղել Աստրախանի հայկական եկեղեցիների ներդրումը: 1879 թ. քաղաքի չորս եկեղեցիների կապիտալը կազմում էր 105.544 ուսուցիչ 64 կոպեկ, իսկ 1900 թվականին՝ արդեն 158.316 ուսուցիչ 47 կոպեկ<sup>40</sup>: Այդ գումարների զգալի մասը եկեղեցական հոգաբարձուք յան միջոցով իրացվում էր սոցիալական և կրթական կարիքների նպատակով:

Խոսելով Աստրախանի հայ հոգևորականութան հասարակական նկատելի դերի մասին, պետք է ընդգծել, որ քաղաքի հոգևոր անձանց շարքերում եղել են ազգային մասշտաբի հասարակական գործիչներ, մշակութային ներկայացուցիչներ: Բավական է ասել, որ Աստրախանի թեմի առաջնորդներից երեքը հետագայում ընտրվել են Ամենայն հայոց հայրապետի պաշտոնում:

Այն քաղաքական բուռն իրադարձութիւնները, որոնք 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին թափանցել են հայկական և ուսանողական իրականութիւն, չէին կարող շրջանցել նաև Աստրախանի հայ համայնքը: Առաջացել են հայկական և ուսանողական տարբեր հոսանքների կողմնակիցներ: Հայկական գաղթավարերում հայկական կուսակցութիւնները ունեցել են իրենց, սովորաբար, փոքր բաժանմունքները: Այսուհանդերձ ուսանողական կուսակցութիւնների կազմակերպութիւնները սովորաբար եղել են ավելի ծավալուն, ունեցել են ավելի լայն սոցիալական բազա և նկատելի ներգործութիւն:

Արևիվային ֆոնդերից և արտասահմանյան հրատարակութիւններից օգտվելու պայմանները հեշտացնելը լայն կերպով ընդարձակում են ժամանակա-

38 ՀՀ ԿԳՊԱ, Փ.52, ց.1, գործ 6273:  
39 ,,Արարատ,, /Էջմիածին/, 1880, Է, էջ 359-360, ,,Մշակ,, /Թիֆլիս/, 29.03.1902:

շրջանի քաղաքական հոսանքներն ուսուցչական կուսակցութիւնները: Այս իմաստով մենք հակված ենք կարծելու, որ Աստրախանում, ինչպես նաև հայկական այլ համայնքներում հայկական կուսակցութիւնների բնիկների գործունեութիւնն ուսուցչական կուսակցութիւնների նպատակահարմար է կատարել՝ ելնելով այդ կուսակցութիւնների պատմութիւնն ուսուցչական սիրութիւնն համատեքստից:

Շատ հայեր անհատապես ընդունվում էին ուսաստանյան կուսակցութիւնների շարքերը և համայնակի ակտիվ գործունեութիւնն ծավալում: Խոմանոս Աստվածատրյանը և Լևոն Պոպովը ընտրվել են ՌՍԳ Աստրախանի կոմիտեի կազմի մեջ, ընդ որում Ռ. Աստվածատրյանը հետագայում գլխավորել է այդ կոմիտեն: Հայկական համայնքի հետ սերտ կապեր են ունեցել 1912-1914 թթ. Աստրախան քաղաքում Ստեփան Շահումյանը և 1918 թվականին ալդեղ գործուղված Վահան Տերյանը: Աստրախանի հայերի բարձր հասարակական գիտակցութիւն, ինչպես նաև՝ մարդկութիւնն մասին վկայում են այն բազմազան ընկերական և վստահելի հարաբերութիւնները, որոնք շատ հայկական ընտանիքներ հաստատել են 1883-1889 թթ. Աստրախան քաղաքում Ն.Գ. Չերնիշևսկու հետ, որը բազմիցս արտահայտել է իր նրախազիտութիւնը հայերի նկատմամբ:

Առեւտրային կազմակերպության եզրափակիչ՝ 11-րդ գլուխը նվիրված է Աստրախանի հայերի մշակութային կյանքին՝ 19-րդ դարի երկրորդ կեսից - 20-րդ դ. սկզբին: Աստրախանի հայերի կրթութիւնն ստացող երեքամեակների հիմնական զանգվածը գլխավորապես սովորում էր Աղաբաբյան դպրոցում: 1847 թվականի հրդեհից հետո դպրոցը տեղափոխվել է վաճառական վարդան Պաստակյանի նվիրած շենքում: Դպրոցի եկամուտները գոյացել են նախկինի պես իշխանատան սենյակները վերծով տալուց, ինչպես նաև պետական փոքր գումարներից:

Աշխատութիւնն մեջ տվալներ են բերված նաև 1851 թ. բացված հայկական առաջին ծխական դպրոցի եկամուտների և ծախսերի մասին: Հետագայում ծխական դպրոցներ են բացվել նաև հայկական եկեղեցիներին կից: 1870 թ. Աստրախանի հայկական ծխական բոլոր դպրոցներում սովորում էին 109 աշակերտ, դրանց եկամուտները կազմում էին 5625 ուսուցիչ, իսկ ծախսերը՝ 3211 ուսուցիչ<sup>41</sup>:

1870 թ. Աստրախանում բացվեց օրիորդաց հոգևոր դպրոց: Հայ աշակերտների զգալի մասը սովորել է ուսանողական ուսուցչական հաստատութիւններում՝ կազմելով ալդեղ սովորողների մինչև 15 տոկոսը: 19-րդ

40 ,,Մեղու Հայաստանի,, /Թիֆլիս/, 12.12.1870, ,,Արարատ,, , 1871, Ժ. էջ 338:

դարի վերջին Աստրախանի տարրեր դպրոցներում և ուսումնարաններում սովորել են ավելի քան 450 հայ աշակերտներ:

Աստրախանում հայկական կրթութան կազմակերպման հարցում նշանակալից տեղ է զբաղում բեմական դպրոցի բացման խնդիրը: Վերջինս առաջացել է 19-րդ դարի 2-րդ կեսին, երևան են եկել առարկութուններ՝ կապված բեմի հայ բնակչության նոր տեղաբաշխման հետ: Հյուսիսային Կովկասում նոր տեսեսական և վարչական կենտրոնները՝ Վլադիկավկազի, Ստավրոպոլի, Գրոզնիի, Պատիզորսկի, Արմավիրի գարգացման հետ աղանղ առաջացել են նոր հայ համայնքներ, որտեղ բնակվել է բեմի բնակչության մեծ մասը: Մյուս կողմից բեմական կենտրոն Աստրախանը մնացել է տարածաշրջանի ծայրին, որտեղ կլիմայական պայմանները անսպաս էին: Վեճ է բացվել բեմական դպրոցի ավելի բարենպաստ տեղ փոխադրելու մասին: Յարական կառավարութունն օգտվել է այդ վեճից, քանի որ նա ըստ էութան դեմ է եղել դպրոցի բացմանը: Դպրոց բացելու ծրագրերում կառավարութունը տեսել է հայերի փայտալած թաղուն ձգտումը՝ բեմական հոգևոր դպրոցի անվան սակ ստեղծել լայն ընդգրկման լիարժեք միջնակարգ ազգային ուսումնական հաստատութուն: Միայն 1905 թ. Աստրախանում հաջողվել է բացել բեմական դպրոցի առաջին երկու դասարանը, բայց ավելի բարձր դասարաններ բացելու խնդիրը չի թույլատրվել:

Պետրվարյան հեղափոխութունից հետո նկատվում են որոշ տեղաշարժեր ազգային կրթութան գործում: Ժամանակավոր կառավարութան որոշմամբ 1917 թ. օգոստոսին Աղաբաբյան դպրոցը վերափոխվել է հայկական գիմնազիայի՝ երկսեռ սովորողների համար՝ ուսական միջնակարգ ուսումնական հաստատութունների ծրագրով: Սակայն 1918 թվականին քաղաքում խորհրդրային իշխանութան հաստատումից հետո Աղաբաբյան գիմնազիան վերափոխվել է շաբաթային դպրոցի, որի ազգային հայկական բնույթը մի քանի տարիներ հետո լրիվ անհետացել է: Վերացվել են նաև հայկական ծխական դպրոցները:

Հայկական տպագրութունը Աստրախանում, որ գոյութուն է ունեցել 18-րդ դարի վերջին - 19-րդ դարի սկզբին, հետագայում երկար ժամանակով ընդհատվում է: Հայկական զրբերը, լրագրերը, դասագրբերը Աստրախան էին հասնում հայ տպագրութան նոր կենտրոններից /Թիֆլիս, Մոսկվա, Կոստանդնուպոլիս և այլ տեղերից/: Աստրախանում հայերեն գիրք տպագրվեց միայն 1898 թ. ուսական մի տպարանում, որը ձևը էր բերել հայկական տառեր: 1908 թ. լույս է տեսել հայկական նոր շաբաթաթերթը՝ «Լրագրերի», առաջին համարը: Սակայն մեր ուսումնապիրութունների ընթացքում պարզվել է, որ դեռևս 1907 թ. Աստրախանի ուսական «Վոլգա», թերթում գոյութուն է ունեցել հատուկ «Հայկական բաժին», որը մի ժամանակ տպագրվել է հայերեն: Դա վկայում է հայ բնակչության

քաղաքի տեսեսական ու հասարակական կյանքում ունեցած ծանրակշիռ դերի մասին:

«Լրագրերը», լույս է ընծայվել 1908 թ. ապրիլից մինչև 1909 թվի հոկտեմբերը: Այգրում թերթը շարվել է Ս. Սեմյոնովի ուսական, իսկ հետո՝ Ա. Ապրեսյանի տպարանում: Հրատարակութունը դադարեցվել է նյութական դժվարութունների պատճառով: 1910 թվականից փորձեր էին արվում կազմակերպել «Մեր կյանքը», շաբաթաթերթի հրատարակութունը, բայց այն կանոնավոր տպագրվել է 1912 թվականից և լույս է տեսել մարտից մինչև օգոստոս ամիսները: Նշված շաբաթաթերթերի էջերում ընտրվում էին հայկական համայնքի համար հրատապ հարցեր /կրթութան և քարեգործութան վերաբերյալ/, հրապարակվում էին լուրեր Հայաստանի ու հուսաստանի ուցիշ տեղերից, միջազգային նյութեր:

Նյութական դժվարութունների հետևանքով դադարեցվել է նաև «Մեր կյանքը», թերթի հրատարակութունը: Հայկական թերթի տպագրութունը վերսկսվեց միայն 1915 թ. ամռանը, երբ լույս տեսան «Թանքեր», թերթի չորս համարները: Քաղաքացիական պատերազմի տարիներին /1919 թ./ Աստրախանում լույս են տեսել բոլշևիկյան «Արմիր բանվոր», թերթի 20 համարները: Թերթի խմբագիրներն էին Աշոտ Խուճարյանը և Հայկ Գյուլիկեխյանը: 20-րդ դարի սկզբին Աստրախանում տպագրվել են նաև հայերեն մի քանի զրբեր:

19-րդ դարի 2-րդ կեսից առաջացել է հայկական մշակութի ևս մեկ օջախ՝ «Թատերաբեմը», Համայնքի պայմաններում թատրոնը կառարում է ոչ միայն գեղարվեստական, այլ նաև կրթական ու հասարակական մեծ դեր, նպաստելով բնակչությանը հայ մշակութի հաղորդակից դարձնելու գործին, գրական հայերենի տարածմանը, ազգային ինքնագիտակցութան ամրապնդմանը:

Արիվալին աղբյուրների, գրականութան, պարբերական մամուլի վերլուծութունը թույլ է տվել մեզ պարզել նախկինում անհայտ մի շարք բեմադրութուններ, վերականգնել Աստրախանի հայկական թատերական կյանքի ողջ ժամանակագրութունը:

Հայերեն առաջին բեմադրութունը Աստրախանում կայացել է 1868 թ. հունվարին, և հետագա վեց տասնամյակների ընթացքում այստեղ գրեթե մշտապես գոյութուն են ունեցել հայ թատերախմբեր, չնայած դրանց գործունեութան ընթացքում պատահել են ընդհատումներ և ճգնաժամային շրջաններ: Աստրախանի հայկական թատրոնը կապված է հայանի բեմադրողներ թովմաս Ծասալաճյանի, Հովհաննես Հալաբյանի, Վսիլի Վարդանյանի, դերասաններ Բուբշալյանի, Սերբբրյակյանի անունների հետ: Ազգային կյանքի փայլուն իրադարձութուններ էին ականավոր վարպետներ Գետրոս Աղամյանի, Սիրանույշի, Վրույրի, Հովհաննես Արեւյանի, Օլգա Գուլազյանի

և շատ ու շատ ուրիշների հյուրախաղերը:

1908 թ. Աստրախանում կազմակերպվեց ,,Հայ գրականության և արվեստի սիրողների ընկերությունը,, որը հսկայական դեր խաղաց տեղի ազգային մշակութային կյանքի վերելքի գործում: Ընկերությունը կանոնավոր կերպով կազմակերպում էր գրական երեկոներ, գեկուլցներ, բանավեճեր, հայ գրողների ու դերասանների հոբելյաններ և այլն: Ընկերությունը իր գոյություն ամբողջ տասը տարվա ընթացքում անխոստիքի էր ղեկավարում նեցավ տնվանի փաստաբան և հասարակական գործիչ Ռոմանոս Աստվածատրյանին: Համայնքի բնակիչներից ոմանք, ովքեր գրելու պահանջ էին զգում իրենց ստեղծագործությունները /պատմվածքներ, բանաստեղծություններ, ակնարկներ/ գեղեղուն էին ֆիզիկսի և այլ քաղաքների հայկական մամուլի էջերում:

Աստրախանի հայկական մշակութային միջավայրից դուրս եկած տաղանդավոր մարդիկ իրենց դրսևորում էին նաև ռուսական մշակույթում: Նրանցից հայտնի են ակամավոր-երգչուհի Նադեժդա Գալախանի, Պետերբուրգի Լրագրող և հրատարակիչ Արեամ Կոտեկնիկյանի և ուրիշների անունները: Աստրախանի հայերի միջավայրից են դուրս եկել նաև տաղանդավոր բժիշկներ, ինժեներներ, զինակազմներ, որոնք մեծ վաստակ ունեն և՛ ռուսաստանի, և՛ հարեգաա հայ ժողովրդի կյանքում:

Աշխատության վերջաբանում ներկայացված են ռուսումնասիրության հիմնական կարգապահությունները: Իրանցից հետևում է, որ Աստրախանի հայկական գաղութը յուրահատուկ տեղ է զբաղեցնում ռուսաստանի հայկական գաղթավայրերի շարքում: Այդ հանգամանքը որոշվում է Աստրախանի աշխարհագրական դիրքով, այնտեղ գաղթօջախի գոյություն կրկարատևությամբ, ինքնավարման մարմինների զարգացման խորություններ, տարածաշրջանի տնտեսական կյանքում ունեցած հայ ժողովրդի մշակույթի մեջ նկատելի ներդրումով ու քաջադիպ դերով: Նշված հատկանիշների շնորհիվ Աստրախանը հանդես է գալիս որպես քաղաքացիական պարզացած հայկական գաղթավայրի փայլուն օրինակ: Մեր կողմից առաջարկված տիպաբանության համապատասխան Աստրախանի հայկական գաղութը ապրեց նման գաղթավայրերի զարգացման բոլոր շրջանները:

Հայերի ինքնավարության կազմակերպումը և գոյությունը Աստրախանում, ի տարբերություն ուրիշ գաղթավայրերի, կապված են հայ բնակչության՝ այդ ինքնավարության և արտոնությունների համար պայքարի հետ:

Աստրախանի հայերի տնտեսական գործունեությունն ամենահաջող ժամանակաշրջաններում շատ կարևոր, իսկ նրբեմն նաև առաջատար դեր էին խաղում ռուսաստանի արտաքին և ներքին առևտրում, ինչպես նաև մի շարք /հատկապես՝ մանածագործական/ արտադրությունների բնագավառում:

Իրա հետ մեկտեղ Աստրախանի հայկական համայնքը միասնական հոգևոր գաղափարական կյանքով է ապրում ողջ հայություն հետ, արտահայտում հասարակական բարձր ակտիվություն: Աստրախանում հայ կրթության և մշակույթի պահպանումը, դպրոցների, տպարանների, թատրոնի ստեղծումը նպաստել են հայ մտավորականության ուժեղ ջոկատի ձևավորմանը: Նրանց ներկայացուցիչները մեծ հետք են թողել ինչպես հայկական, այնպես էլ ռուսական մշակույթի պատմության մեջ:

Աստրախանի հայերի վերաբերյալ լույս են տեսել հետևյալ աշխատանքները

1. Административно-правовое положение астраханских армян во второй половине XVIII века.- "Изв.АН АрмССР", общ.науки, 1963, № 12.- I п.
2. Տանտուֆերդի դարի Աստրախանի հայերի մշակութային կյանքի պատմություններից - ,,Պատմաբանասիրական հանդես,, , 1964, Կ.2, 1 մ.:
3. Население армянской колонии Астрахани во второй половине XVIII века.- "Изв.АН АрмССР", общест.науки, 1965, № 7.- I п.л.
4. Из истории армянской печати в России.- "Вестник общест.наук" АН АрмССР, 1967, № 1.- I п.л.
5. Судебно-административные органы астраханских армян и их архивные фонды.- "Вестник архивов Армении", 1971, № 3.- 0,5 п.л.
6. Поселение в Астрахани.- "Лит.Армения", 1972, № 4.- I п.л.
7. Աստրախանի հայ գաղութի 17-18-րդ դարերում. - ,,Հայ ժողովրդի պատմություն,, , Կ.4, Եր. 1972, 1 մ. /Վ.Կ. Ոսկանյանի համահեղ./
8. Աստրախանի հայ գաղութը 19-րդ դ. առաջին կեսին - ,,Հայ ժողովրդի պատմություն,, , Կ.5, Եր. 1973 - 1 մ.:
9. Հյուսիսային Կովկասի հայ գաղութները 19-րդ դ. առաջին կեսին - ,,Հայ ժողովրդի պատմություն,, , Կ.5, Եր. 1973 - 0,5 մ., /Վ.Լ. Աղրաշյանի համահեղ./:
10. Հայ-ռուսական քաղաքական կապերի պատմություններից - ԳԶ, 1978, Կ.3-1 մ.:
11. Астраханская армянская колония и русско-армянские отношения.- "Вестник общественных наук" АН АрмССР, 1978, № 10.- I п.л.
12. Роль армян в ткацкой промышленности Астрахани.- "Историко-филологический журнал" АН АрмССР, 1980, № 3.- I п.л.
13. Из истории астраханской Агабабовской школы /Материальная база школы.- "Вестник обществ.наук" АН АрмССР, 1981, № 1.- I п.л.

14. Ասորիսանի համերը 19-րդ դ. 2-րդ կեսին - 20-րդ դ. սկզբին - , , Հայ ժողովրդի պատմություն, , , Կ.6, Եր. 1981 - 0,5 մ.:
15. Հուսիսային կովկասի համերը 19-րդ դ. 2-րդ կեսին - 20-րդ դ. սկզբին - , , Հայ ժողովրդի պատմություն, , , Կ.6, Եր. 1981-0,5 մ. /Վ.Լ. Աղոթաշյանի համահեղ.:/:
16. 19-րդ դ. Ասորիսանում հայկական կրթութան պատմությունից - , , Լրաբեր հասարակական գիտություններին, , , 1982, Կ.7, -1 մ.:
17. Образование армянской колонии в Астрахани.- "Историко-филологический журнал" АН АрмССР, 1983, № 4.- I п.л.
18. Народные движения в России ХУП-ХУШ веков и астраханские армяне.- "Вестник Ереванского университета", 1984, № I.- I п.л.
19. Роль кредита в деятельности армянского купечества в России /ХУП-ХУШ вв./.- "Историко-филологический журнал" АН АрмССР, 1986, № 2.- I п.л. /в соавт. с Ж.А.Ананяном/
20. Հայ ժողովրդի ազատագրական շարժումները և Ասորիսանի հայ գաղութը 18-րդ դարում - 16-18-րդ դդ. հայ ազատագրական շարժումները և հայ գաղթավարները /Հոդվածների ժողովածու/՝ զրբի մեջ: Երևան, 1989 -1 մ.:
21. Հայ վաճառական կապիտալը հուսաստանում 17-18-րդ դդ. - , , Հայաստանի ժող. տնտեսություն, , , 1989, Կ.8, - 1 մ. /Ժ.2. Անանյանի համահեղ.:/:
22. Հայկական թաղերը Ասորիսանում 19-րդ դ. վերջերին - 20-րդ դարի սկզբներին - , , Լրաբեր հասարակական գիտություններին, , , 1991, Կ.4, 1 մ.:
23. Армянские общины России. Ереван, 1993, 120 с. /в соавт. с Ж.А. Ананяном/.

ХАЧАТУРЯН Варган Аршавирович

АРМЯНСКАЯ КОЛОНИЯ АСТРАХАНИ /середина ХУІ - начало ХХ вв./

Р е з ю м е

Армянские общины в разных странах представляют неразрывную часть армянского народа и занимают особое место в его истории. В течение многих столетий, - особенно в периоды, когда в самой Армении отсутствовали условия для государственного, общественного и культурного развития, - в армянских общинах создавались национальные образовательные и культурные очаги, а иногда и органы самоуправления, обладавшие атрибутами государственности.

К числу колоний, игравших наиболее важную экономическую, политическую и культурную роль, относится и армянское поселение Астрахани. Это определяется и географическим положением города, и длительностью существования колонии, и степенью развития органов ее самоуправления, а также исключительной ролью в экономической жизни города и региона, заметным вкладом в общественную и культурную жизнь армянского народа.

Несмотря на появление в последние десятилетия ряда исследований и публикаций по истории армянских общин в России /в том числе и астраханской/, настоящая работа представляет цельное обобщающее исследование, раскрывающее основные проблемы содержательной истории армянской общины Астрахани за четыре столетия ее существования.

Нами установлены характерные этапы возникновения, развития и трансформации поселения в Астрахани, как одной из классических армянских колоний: I/ период становления и развития колонии /2-я пол.ХУІ - сер.ХУШ вв./, когда происходило формирование армянского поселения, налаживание экономической деятельности астраханских армян и получение ими первых привилегий от русского правительства; 2/ период оформления и действия судебно-административных органов колонии, как автономной единицы /сер.ХУШ - сер.ХІХ вв./, совпавший со временем насыщенной торгово-промышленной деятельности армян и формированием в Астрахани армянских культурно-просветительских очагов; 3/ период после ликвидации привилегированного статуса армянской колонии /сер.ХІХ - нач.ХХ вв./, когда экономическая деятельность армян разворачивается в условиях развития в России капиталистических отношений и одновременно наблюдается подъем культурной и обществен-

ной жизни армян Астрахани.

Эти этапы определили периодизацию нашего исследования: каждому периоду истории поселения соответствует один из разделов работы, причем второму, наиболее важному и насыщенному периоду, посвящены два раздела: отдельно о 2-й половине XVIII и 1-й половине XIX вв.

Исследование представляет результат многолетней работы автора в архивах и библиотеках Еревана, Москвы, Санкт-Петербурга, Астрахани, Казани. Изучены и введены в научный оборот многочисленные факты, касающиеся истории возникновения и развития, правового положения, экономической, общественной и культурной жизни астраханских армян.

Изучена деятельность органов самоуправления колонии. Выявленные из источников многочисленные цифровые данные показывают важную роль армянского населения Астрахани в торговле России со странами Востока, в промышленности региона — особенно в ткацком производстве, в развитии в России капиталистических отношений. Освещена история армянских учебных заведений Астрахани, типографий, театральных и других культурных очагов.

Работа состоит из введения, 4 разделов, включающих II глав, заключения и списка использованных источников и литературы. По теме диссертации имеется 23 основные публикации.